ՀԱՍՏԱՏՎԱԾ է

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ խորհրդի
«28» դեկտեմբերի 2021թ.
Թիվ 02-Ո-21-013/01 որոշմամբ
Խորհրդի նախագահ՝
Է. Սուքիասյան_____

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Նախագիծը	Անուն/Ազգանուն	Պաշտոն	Ամսաթիվ	Ստորագրություն
ԿԱՋՄԵՑ	Լ. Մամիկոնյան	Գործադիր տնօրենի տեղակալ	01.11.2021	
ՍՏՈՒԳԵՑԻՆ	Գ. Գյուլամբարյան	Համապատասխանության ապահովման պատասխանատու	26.11.2021	
	Ա. Մեջլումյան	Իրավաբանական բաժնի պետ	06.12.2021	
ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ	Ա. Մելքոնյան	Գործադիր տնօրեն	24.12.2021	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ....3
2 ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ....4
3 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ....8
4 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ....9
5 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ....11
6 ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ....12
7 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ....13
8 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ....14
9 ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ 16
10 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ....19
11 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՈՒՄԸ....23
12 ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ....31
13 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....32
15 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ....37
17 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ....45
18 ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)....46
19 ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ....47

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 ««ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Տրանսպորտային միջոցների համապարփակ ապահովագրության պայմանները» փաստաթուղթը նպատակ է հետապնդում սահմանել Պայմանների կիրառման յուրաքանչյուր ոլորտի ապահովագրական օբյեկտ, ապահովագրական պատահար, ապահովագրական հատուցում և այլ հասկացությունների սահմանումը, ինչպես նաև ապահովագրության յուրաքանչյուր դասի պարագայում կարգավորել Ապահովագրողի կողմից հատուցվող ծախսերի, չհատուցվող ծախսերի, հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի, ապահովագրական պատահարի դեպքում՝ կողմերի գործողությունները և ապահովագրական հատուցման հետ կապված այլ իրավահարաբերություններ:

1.2 Պայմանները մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքին, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.3 «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ-ն իրականացնում է տրանսպորտային միջոցի համապարփակ ապահովագրություն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի (Ապահովագրության տեսակները և դասերը) 2-րդ մասով (ոչ կյանքի ապահովագրություն) ամրագրված հետևյալ դասերով.

1.3.1 Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ երկաթուղային), որը ծածկում է այն վնասները կամ կորուստները, որոնք պատճառվել են.

ա) ցամաքային ավտոտրանսպորտին,

բ) այլ ցամաքային տրանսպորտին:

1.3.2 Դժբախտ պատահարներից ապահովագրություն (ներառված չեն արդյունաբերական վնասը և մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված հիվանդությունները).

ա) ամրագրված դրամական հատուցմամբ,

բ) հատուցմամբ՝ կախված պատահարի բնույթից,

գ) սույն կետի «ա» և «բ» ենթակետերը միասին,

դ) ուղևորների վնասվածքների:

1.3.3 Ցամաքային տրանսպորտային միջոցների (նաև բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն:

1.4 Պայմանների համաձայն կնքված Պայմանագրերը գործում են Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

1.5 Պայմանները կցվում են ապահովագրության Պայմանագրին/Վկայագրին (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը և պարտադիր են

Ապահովագրողի և Ապահովադրի (այսուհետ միասին նաև Կողմեր), Շահառուի և Ապահովագրված անձի համար, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Պայմանագրի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են Պայմանագրով նախատեսել Պայմանների առանձին դրույթների փոփոխում, չկիրառում կամ այլ դրույթներ, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին:
1.6 Սույն փաստաթուղթը համապատասխանում է ISO 9001:2015 և 27001:2013 ՈԿՀ և ՏԱԿՀ ստանդարտներին:
1.7 Պայմաններն ուժի մեջ են մտնում Խորհրդի հաստատումից տասն աշխատանքային օր հետո: Պայմանների ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են համարվում «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Խորհրդի թիվ 02-Ո-19-008/01 01.10.2019թ. հաստատված ««ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Տրանսպորտային միջոցի ապահովագրության պայմանները»:
1.8 Պայմաններում փոփոխությունները և/կամ լրացումները կատարվում են Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ու հաստատվում են Ընկերության խորհրդի որոշմամբ:
1.9 Պայմանները հրապարակային օգտագործման փաստաթուղթ է և տեղադրվում է Ընկերության պաշտոնական վեբ կայքում (www.silinsurance.am):

2 ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1 Տերմիններ և հասկացություններ.

2.1.1 *Ընկերություն* - «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ:
2.1.2 *Պայմաններ* - ««ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Տրանսպորտային միջոցների համապարփակ ապահովագրության պայմաններ»:
2.1.3 *Ընկերության խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ) –* Ընկերության կանոնադրության համապատասխան՝ Ընկերության բաժնետերերի կողմից ձևավորված ընդհանուր կառավարման կոլեգիալ մարմին:
2.1.4 *Ընկերության գործադիր տնօրեն (այսուհետ՝ Գործադիր տնօրեն)* – Ընկերության կանոնադրությամբ նախատեսված Ընկերության միանձնյա գործադիր մարմին:
2.1.5 *Որակի կառավարման համակարգ* – Որակի բնագավառում Ընկերության կառավարմանը նպատակաուղղված համակարգված միջոցառումների ամբողջություն:
2.1.6 *Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ* – Տեղեկատվական հոսքերի բնագավառում Ընկերության կառավարմանը նպատակաուղղված համակարգված միջոցառումների ամբողջություն:
2.1.7 *Որակի պատասխանատու* - Ընկերության աշխատող կամ Ընկերության հետ համապատասխան ծառայության մատուցման պայմանագիր ունեցող այլ

ընկերության աշխատող, որը պատասխանատու է Որակի ապահովմանն ու կառավարմանը ներկայացվող պահանջների կատարման համար:

2.1.8 *Ապահովագրող* - «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն:

2.1.9 *Ապահովադիր* - Ապահովագրողի հետ Պայմանագիր կնքած՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ցանկացած կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձ, պետական և տեղական ինքնակառավարման մարմին, օտարերկրյա (ոչ ռեզիդենտ) կազմակերպություն, ֆիզիկական անձ, ներառյալ օտարերկրյա քաղաքացի և քաղաքացիություն չունեցող անձ, ովքեր գործունակ են:

2.1.10 *Շահառու* - ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ: Գրավադրված տրանսպորտային միջոցի ապահովագրության դեպքում Ապահովագրության պայմանագրում նշված գրավառու հանդիսացող Շահառուն առաջնահերթության կարգով իրավունք ունի ստանալու հատուցում ոչ ավել, քան վճարման օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորության գումարի չափով: Հատուցման մնացած մասը վճարվում է Ապահովադրին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Տրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության դեպքում Շահառու է հանդիսանում ապահովագրական պատահարի արդյունքում տուժող ճանաչված անձը: Բաժին Բ-ով սահմանված ապահովագրական ռիսկը Պայմանագրով նախատեսված լինելու դեպքում Շահառու են հանդիսանում տրանսպորտային միջոցի Լիազորված վարորդը և ուղևորները կամ նրանց ժառանգները (իրավահաջորդները):

2.1.11 *Ապահովագրված անձ* - անձ, որի հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է Պայմանագրի առարկա:

2.1.12 *Ապահովագրության Պայմանագիր/Վկայագիր* - Ապահովագրողի և Ապահովադրի միջև երկկողմանի ստորագրված գրավոր համաձայնություն, որի գործողության ընթացքում Ապահովագրողը պարտավոր է որոշակի միանվագ կամ պարբերական վճարի (ապահովագրավճարի) դիմաց ապահովադրին կամ նրա մատնանշած անձին (շահառուին), որոշակի ապահովագրական գումարի շրջանակներում հատուցել ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը կամ դրա մի մասը կամ տրամադրել որոշակի գումար (ապահովագրական հատուցում) (բացառությամբ՝ Պայմաններով նախատեսված բացառությունների, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ), իսկ Ապահովադիրը պետք է վճարի ապահովագրության պայմանագրում հաշվարկված ապահովագրավճարը դրանում նշված չափով, կարգով և ժամկետներում:

2.1.13 *Ապահովագրության օբյեկտ* - ապահովագրման ենթակա գույքային շահերը:

2.1.14 *Ցամաքային տրանսպորտային միջոց (ՏՄ)* – մարդկանց (ուղևորներ) և բեռներ փոխադրելու կամ բեռներ փոխադրելու համար օգտագործվող տրանսպորտային միջոցի քարշակման համար նախատեսված մեխանիկական տրանսպորտային միջոց, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար սարքավորված անիվավոր ավտոտրանսպորտային միջոց, ներառյալ՝ թեթև մարդատար ավտոմեքենա, ավտոբուս, միկրոավտոբուս, բեռնատար ավտոմեքենա, բեռնաուղևորատար ավտոմեքենա, մոտոցիկլետ, քարշակ, էլեկտրոմոբիլ և այլն: Եթե Պայմանագրով տրանսպորտային միջոցի հետ ապահովագրվում են նաև ՏՄ-ում մշտապես տեղադրված լրացուցիչ սարքավորումները, ապա Պայմանագրի իմաստով Ցամաքային տրանսպորտային միջոց է համարվում տրանսպորտային միջոցը և լրացուցիչ սարքավորումները միասին:

2.1.15 *Լրացուցիչ սարքավորումներ* - սարքավորումներ, մասեր, որոնք չեն հանդիսանում ՏՄ-ն արտադրող գործարանի կողմից նախատեսված լրակազմի մաս (օրինակ՝ աուդիո, վիդեո համակարգեր, ոչ գործարանային անվահեցեր, բարձրախոս, համակարգիչ, կապի միջոցներ, հակաառևանգման միջոցներ, ոչ գործարանային ավտոձայնագրիչ, ոչ գործարանային տեղադրության գազի բալոն և այլն):

2.1.16 *Ապահովագրական ռիսկ* - ապահովագրման ենթակա հնարավոր իրադարձություն, որը կարող է տեղի ունենալ Պայմանագրի գործողության ընթացքում՝ կրելով հանկարծակի և պատահական բնույթ, ու կախված չէ Կողմերի կամ Լիազորված վարորդի կամ Շահառուի կամքից:

2.1.17 *Ապահովագրական պատահար* - *Պայմանագրով* նախատեսված իրադարձություն, որի տեղի ունենալու ուժով (բացառությամբ Պայմանագրով կամ Պայմաններում նախատեսված դեպքերի) Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում՝ Պայմաններում և Պայմանագրում նշված կարգով:

2.1.18 *Ապահովագրական հատուցում (այսուհետ՝ Հատուցում)* - ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ընկերության կողմից Պայմանագրի հիման վրա Ապահովադրին կամ Շահառուին վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով:

2.1.19 *Դժբախտ պատահար* – Պայմանագրի գործողության ընթացքում ՏՄ-ի տիրապետման և/կամ օգտագործման/շահագործման հետևանքով առաջացած հանկարծակի, անսպասելի, անկանխատեսելի, կարճաժամկետ (մինչև մեկ ժամ տևողությամբ), պատահական բնույթ կրող, արտաքին ազդեցությամբ պայմանավորված և հիվանդության հետևանք չհանդիսացող իրադարձություն, որը հանգեցրել է Լիազորված վարորդի և/կամ ուղևորների մարմնական վնասվածքի (այդ թվում՝ հաշմանդամության) կամ մահվան:

2.1.20 *Ապահովագրական գումար* - Պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրության պայմանագրով նախատեսված Ապահովագրողի պատասխանատվության առավելագույն չափը:

2.1.21 *Ապահովագրական արժեք* - Պայմանագրի կնքման պահին ՏՄ-ի շուկայական արժեք:

2.1.22 *Ապահովագրավճար* – Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար:

2.1.23 *Ապահովագրական սակագին* – ապահովագրավճարի դրույքաչափն է ապահովագրական գումարի նկատմամբ:

2.1.24 *Չհատուցվող գումար* - վնասի չափ, որը չի հատուցվում Ապահովագրողի կողմից և որը սահմանվում է Պայմանագրով՝ կոնկրետ գումարի կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Չհատուցվող գումարը լինում է երկու տեսակի՝

- ✓ *Պայմանական չհատուցվող գումար*, որի դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասը չի գերազանցում Պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը.
- ✓ *Ոչ պայմանական չհատուցվող գումար*, որի դեպքում Ապահովագրողն ազատվում է որոշակի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:

2.1.25 *Լիազորված վարորդ* - առնվազն 3 տարվա նշված կարգի ՏՄ վարելու համապատասխան վարորդական իրավունք ունեցող Ապահովադիրը, առնվազն 3 տարվա նշված կարգի ՏՄ վարելու համապատասխան վարորդական իրավունք ունեցող ՏՄ-ի սեփականատերը, առնվազն 3 տարվա նշված կարգի ՏՄ վարելու համապատասխան վարորդական իրավունք ունեցող ցանկացած անձ, ով լիազորված է ՏՄ-ի սեփականատիրոջ կողմից վարելու ապահովագրված ՏՄ-ն, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

Եթե Պայմանագրում Լիազորված վարորդներ նշված չեն, ապա Պայմանագիրը համարվում է կնքված «անսահմանափակ» սկզբունքով և այդ դեպքում ՏՄ-ն կարող է վարել ցանկացած անձ, ով կբավարարի սույն կետի առաջին պարբերությունում նշված «Լիազորված վարորդ» հասկացության պահանջներին:

ՏՄ-ի տիրապետելու ընթացքում Լիազորված վարորդն իրականացնում է Պայմաններում նշված Ապահովադրի այն պարտականությունները, որոնք կապված են ՏՄ-ի օգտագործման, շահագործման և պահպանման հետ:

2.2 Հապավումներ.

- ՀՀ – Հայաստանի Հանրապետություն:
- ՈԿՀ – ISO 9001 ստանդարտին համապատասխան Որակի կառավարման համակարգ:
- ՏԱԿՀ – ISO 27001 ստանդարտին համապատասխան Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ:
- ՏՄ- Ցամաքային տրանսպորտային միջոց:

3 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1 Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի (Շահառուի, Ապահովագրված անձի)՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը՝ կապված հետևյալ իրադարձությունների հետ.

3.1.1 Բաժին Ա. ՏՄ-ի տիրապետման և/կամ օգտագործման/շահագործման հետևանքով ՏՄ-ին և/կամ ՏՄ-ում մշտապես տեղադրված լրացուցիչ սարքավորումներին (եթե լրացուցիչ սարքավորումներն Ապահովագրողի համաձայնությամբ ապահովագրվել են Պայմանագրում) վնաս և/կամ կորուստ պատճառվելը՝ Պայմանների 1.3.1. կետով նախատեսված դասին համապատասխան:

3.1.2 Բաժին Բ. ՏՄ-ի տիրապետման և/կամ օգտագործման/շահագործման արդյունքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով Լիազորված վարորդի և/կամ ուղևորների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառվելը՝ Պայմանների 1.3.2 կետով նախատեսված դասին համապատասխան:

3.1.3 Բաժին Գ. ՏՄ-ի տիրապետման և/կամ օգտագործման/շահագործման արդյունքում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին վնաս պատճառվելը՝ Պայմանների 1.3.3 կետով նախատեսված դասին համապատասխան:

3.2 Եթե ապահովագրական պատահարի ժամանակ վնասվում է ՏՄ-ի այն հատվածը և/կամ մասը կամ դետալը, որը Պայմանագրի կնքման պահին եղել է վնասված կամ հետևանք է մեկ այլ՝ ոչ ապահովագրական պատահարի, ապա ապահովագրական հատուցման գումարը հաշվարկելիս նախկինում առկա վնասվածքների արժեքի չափով կատարվում են համապատասխան նվազեցումներ, որոնց չափը որոշվում է Ապահովագրողի կողմից:

3.3 Եթե Պայմանագրի գործողության ընթացքում ՏՄ-ի և/կամ մասի կամ դետալի՝ նախկինում առկա վնասվածքները վերացվում/վերանորոգվում են, և Ապահովադիրն այդ մասին տեղեկացնում է Ընկերությանը, ապա վերջինս իրականացնում է ՏՄ-ի զննում և կազմում զննման ակտ: Զննման ակտը կազմելուց հետո տեղի ունեցած

ապահովագրական պատահարի արդյունքում ՏՄ-ի և/կամ մասի կամ դետալի վնասը, որը նախկինում նշվել է որպես առկա և վերացվել է, ենթակա է հատուցման:

4 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

4.1 Ապահովագրողն իրականացնում է ՏՄ-ի ապահովագրությունը սույն գլխում նշված ապահովագրական ռիսկերից ներքոնշյալ բաժիններով, եթե Պայմանագրով և/կամ Պայմաններով այլ բան նախատեսված չէ

4.1.1 **Բաժին Ա-ի դեպքում հատուցման ենթակա է** ստորև նշված իրադարձությունների հետևանքով ՏՄ-ին պատճառված **ֆիզիկական վնասը և/կամ կորուստը**.

4.1.1.1 **ՃՏՊ (ճանապարհատրանսպորտային պատահար)** - ճանապարհով ՏՄ-ի շարժման ընթացքում կամ կանգառի վիճակում դրա մասնակցությամբ առաջացած դեպք:

4.1.1.2 **Բնական/տարերային աղետներ** (բացառությամբ՝ երկրաշարժ և սողանք, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով) - բնության ազդեցությունը ՏՄ-ի վրա (օդային զանգվածի տեղաշարժումներ, փոթորիկ, մրրիկ, կայծակի հարված, ջրհեղեղ, կարկուտ, հրաբխի ժայթքում, լեռնային փլուզում, գետնի նստվածք, սելավ, ձնահյուս):

4.1.1.3 **Կենդանիների գործողություններ**:

4.1.1.4 **Վնասվածք** - Թռչող սարքավորումների կամ նրանց բեկորների և/կամ մասերի կամ այլ առարկաների, իրերի, շինարարական կոնստրուկցիաների հետ բախումը ՏՄ-ի հետ կամ դրանց վայր ընկնելը ՏՄ-ի վրա, ինչպես նաև ծառերի, քարերի, բեկորների, ձյան, սառույցի վայր ընկնելը ՏՄ-ի վրա, ՏՄ-ն ջրի մեջ ընկնելը:

4.1.1.5 **Հրդեհ և (կամ) պայթուն** - չվերահսկվող այրում և/կամ մեծ հարվածային ուժով էներգիայի կտրուկ արագության միանվագ առաջացում, բացառությամբ Պայմանների 4.1.1.6.1 կետով նախատեսված դեպքերի:

4.1.1.6 **Երրորդ անձանց անօրինական գործողություններ**, որն իր մեջ ներառում է՝

4.1.1.6.1 Երրորդ անձանց կողմից թույլ տրված անօրինական գործողություններ կամ նման գործողությունների փորձ, այդ թվում՝ ֆիզիկական ուժի գործադրումով, ներառյալ՝ դրանց հետևանքով ՏՄ-ի հրկիզում, պայթեցում, վնաս և/կամ կորուստ,

4.1.1.6.2 Երրորդ անձանց կողմից անզգուշությամբ թույլ տրված անօրինական գործողություններ:

4.1.2 **Բաժին Ա-ի դեպքում հատուցման ենթակա է** ստորև նշված իրադարձությունների (ընդհանուր՝ հափշտակության ռիսկ) հետևանքով ՏՄ-ին պատճառված ֆիզիկական վնասը և/կամ կորուստը.

4.1.2.1 ՏՄ-ի կամ նրա մասերի գողություն կամ դրա փորձ,

4.1.2.2 ՏՄ-ի կամ նրա մասերի կողոպուտ կամ դրա փորձ,

4.1.2.3 ՏՄ-ին ապօրինաբար տիրանալը առանց հափշտակելու նպատակի, եթե այդ ապահովագրական ռիսկն առանձին նշված է Պայմանագրում,

4.1.2.4 Ավազակության հետևանքով ՏՄ-ին պատճառված վնաս, եթե այդ ապահովագրական ռիսկն առանձին նշված է Պայմանագրում:

4.1.3 **Բաժին Բ-ի դեպքում հատուցման ենթակա է** ՏՄ-ի տիրապետման և/կամ օգտագործման/շահագործման արդյունքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով Լիազորված վարորդի և/կամ ուղևորների կյանքին, առողջությանը և աշխատունակությանը պատճառված վնասը և/կամ կորուստը, մասնավորապես՝

4.1.3.1 դժբախտ պատահարի հետևանքով Լիազորված վարորդի և/կամ ուղևորների մահ,

4.1.3.2 դժբախտ պատահարի հետևանքով Լիազորված վարորդի և/կամ ուղևորների հաշմանդամություն,

4.1.3.3 դժբախտ պատահարի հետևանքով Լիազորված վարորդի և/կամ ուղևորների աշխատունակության ժամանակավոր կորուստ,

4.1.3.4 դժբախտ պատահարի հետևանքով Լիազորված վարորդի, ուղևորների առաջին բուժօգնության համար նախատեսված հիմնավորված և անհրաժեշտ բժշկական ծախսեր:

4.1.4 **Բաժին Գ-ի դեպքում հատուցման ենթակա է** ՏՄ-ի տիրապետման և/կամ օգտագործման/շահագործման արդյունքում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ նրանց գույքին (նաև՝ տրանսպորտային միջոցին) պատճառված վնասը:

4.2 Բաժին Ա-ով ՏՄ-ի ապահովագրությունը (CASCO) կարող է իրականացվել հետևյալ տարբերակներով.

4.2.1 ՏՄ-ի ապահովագրություն Պայմանների 4.1.1 կետում նշված ռիսկերից,

4.2.2 ՏՄ-ի ապահովագրություն Պայմանների 4.1.1 և 4.1.2 կետերում կամ դրանց մի քանի ենթակետերում նշված հափշտակության ռիսկերից:

4.3 Սույն գլխով սահմանված յուրաքանչյուր բաժնի համար Ապահովագրական պատահար է համարվում տվյալ բաժնում նշված յուրաքանչյուր իրադարձության (ապահովագրական ռիսկի) տեղի ունենալը, որը համապատասխանաբար հանգեցրել է Պայմանների 4.1.1, 4.1.2, 4.1.3 և 4.1.4 կետերում նշված հետևանքների, բացառությամբ Պայմանագրով կամ Պայմաններում նախատեսված դեպքերի:

5 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

5.1 Պայմանագրում յուրաքանչյուր բաժնով նախատեսված ապահովագրության օբյեկտների ապահովագրական գումարները նշվում են առանձին տողերով:

5.2 Բաժին Ա-ի դեպքում՝

5.2.1 Ապահովագրական գումարը չի կարող գերազանցել ՏՄ-ի ապահովագրական արժեքը,

5.2.2 Պայմանագիրը կարող է կնքվել «լրիվ արժեքով» կամ «ոչ լրիվ արժեքով» ապահովագրության պայմաններով:

5.2.3 Ապահովագրությունը համարվում է «լրիվ արժեքով», եթե ապահովագրական գումարը հավասար է ՏՄ-ի ապահովագրական արժեքին:

5.2.4 «Լրիվ արժեքով» ապահովագրության դեպքում վնասը հատուցվում է ամբողջությամբ, որը որոշվում է համաձայն Պայմանագրի և Պայմանների:

5.2.5 Ապահովագրությունը համարվում է «ոչ լրիվ արժեքով», եթե Պայմանագրում ապահովագրական գումարը ՏՄ-ի ապահովագրական արժեքի գումարից պակաս է նշված:

5.2.6 «Ոչ լրիվ արժեքով» ապահովագրության դեպքում վնասը հատուցվում է մասնակի՝ ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերությանը համամասնորեն՝ համաձայն Պայմանագրի և Պայմանների:

5.3 Բաժին Բ-ի և Գ-ի դեպքում ապահովագրական գումարները սահմանվում են կողմերի համաձայնությամբ:

5.4 Բաժին Բ-ի դեպքում Պայմանագրում կարող է սահմանվել հատուցման սահմանաչափ յուրաքանչյուր նստատեղի համար:

5.5 Բաժին Գ-ի դեպքում Պայմանագրում կարող է սահմանվել պատասխանատվության ենթասահմանաչափ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար կամ պատասխանատվության ենթասահմանաչափ մարմնական և գույքային վնասների համար:

5.6 Յուրաքանչյուր ապահովագրական պատահարից հետո ապահովագրական գումարը նվազում է վճարված ապահովագրական հատուցման գումարի չափով: Սակայն Ապահովադրի ցանկությամբ կարող է նվազած ապահովագրական գումարը վերականգնվել Պայմանագրին կից համաձայնագրի (հավելվածի) երկկողմանի կնքմամբ՝ Ապահովագրողի կողմից հաշվարկված լրացուցիչ ապահովագրավճարը Ապահովադրի կողմից վճարվելու պայմանով:

5.7 Ապահովագրավճարի չափը սահմանվում է Պայմանագրով՝ ֆիքսված գումարի չափով կամ Ապահովագրական գումարի նկատմամբ կիրառելով համապատասխան ապահովագրական սակագին, որի չափը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից:

5.8 Ապահովագրավճարը Կողմերի համաձայնությամբ կարող է վճարվել կանխիկ կամ անկանխիկ, միանվագ կամ տարաժամկետ կարգով, որի վճարման չափը, կարգն ու ժամկետները սահմանվում են Պայմանագրով: Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի վճարման կարգը և ժամկետները Ապահովադրի կողմից խախտվելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը վճարման ենթակա ապահովագրավճարի համապատասխան չափի վճարման համար սահմանված վերջնաժամկետն ավարտվելու հաջորդ օրվանից:
5.9 Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը սույն կետով սահմանված ժամկետին հաջորդող 5-րդ օրվանից սկսած (եթե Պայմանագրով այլ ժամկետ սահմանված չէ):
5.10 Եթե Պայմանագրով նախատեսվել է ապահովագրավճարի տարաժամկետ վճարման պարտավորություն, և Հատուցում տրամադրելու պահի դրությամբ ապահովագրավճարն ամբողջությամբ կամ դրա հերթական մասը վճարված չէ, ապա Ապահովագրողը հատուցվող գումարը կարող է նվազեցնել չվճարած ամբողջ ապահովագրավճարի չափով՝ անկախ Պայմանագրով սահմանված Ապահովագրավճարի վճարման ժամկետներից:
5.11 Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցումը, եթե Ապահովադիրն ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահի դրությամբ ապահովագրավճարի վճարման գծով ունի ժամկետանց պարտավորություններ:
5.12 Մեկ տարուց պակաս ժամկետով կնքվող ապահովագրության պայմանագրերի դեպքում ապահովագրավճարը հաշվարկվում է տարեկան ապահովագրավճարի նկատմամբ կիրառելով համամասնություն, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

6 ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

6.1 Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ Պայմանագրում կարող է նախատեսվել չհատուցվող գումար:
6.2 Չհատուցվող գումարը Ապահովադրի մասնակցության չափն է ապահովագրական հատուցմանը, որը սահմանվում է Պայմանագրով՝ կոնկրետ գումարի կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով:
6.3 Եթե ապահովագրական պատահարի ժամանակ ՏՄ-ն վարած Լիազորված վարորդի տարիքը փոքր է 21-ից և/կամ վարորդական ստաժը ավել է 1 տարուց, բայց քիչ է 3 տարուց, ապա Պայմանների 4.1.1. կետով նախատեսված ռիսկերի դեպքում կիրառվում է չհատուցվող գումար՝ Պայմանագրով սահմանված համապատասխան

գումարի կրկնապատիկի չափով, իսկ եթե վարորդական ստաժը քիչ է 1 տարուց, ապա կիրառվում է չհատուցվող գումար՝ Պայմանագրով սահմանված համապատասխան գումարի եռապատիկի չափով (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով):

7 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

7.1 Պայմաններով ապահովագրման ենթակա է սեփականության, վարձակալության կամ լիզինգի պայմանագրով, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ եղանակով շահագործման ենթակա ՏՄ-ն:
7.2 Ապահովագրողի համար Պայմանագրի կնքման հիմք է հանդիսանում Ապահովադրի բանավոր հայտը կամ նրա կողմից լրացված դիմում-հարցաթերթիկը (որը տրամադրվում է Ապահովագրողի կողմից):
7.3 Պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով, երկու օրինակից: Անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել երկուսից ավելի օրինակով:
7.4 Պայմանագրին կից կարող են թողարկվել համաձայնագրեր կամ հավելվածներ, որոնք հանդիսանում են դրա անբաժանելի մասը:
7.5 Պայմանագրի կորստի կամ վնասվածքի դեպքում Ապահովագրողը, Ապահովադրի դիմումի համաձայն, վերջինիս տրամադրում է Պայմանագրի կրկնօրինակը՝ նման դիմում ներկայացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:
7.6 Պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:
7.7 Եթե Պայմանագրի կնքումից հետո պարզվել է, որ Ապահովադիրը սուտ կամ իրականությանը չհամապատասխանող կամ ապակողմնորոշիչ կամ կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ է հայտնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության վրա ազդող հանգամանքների վերաբերյալ, ապա Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ լուծել՝ որպես Ապահովադրի կողմից թույլ տրված Պայմանագրի էական խախտում, և կիրառել Պայմանների 8.3 կետով նախատեսված հետևանքները:
7.8 Պայմանագիր կնքելիս Ապահովագրողի պահանջով Ապահովադիրը պետք է ՏՄ-ն ներկայացնի Ապահովագրողի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից զննման, ինչպես նաև տրամադրի՝

7.8.1 ՏՄ-ի նկատմամբ իր իրավունքը հավաստող փաստաթղթերը,
7.8.2 Ֆիզիկական անձ Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթը, սոցիալական քարտը կամ ՀԾՀ տեղեկանքը (դրանց առկայության դեպքում), վարորդական իրավունքի վկայականը,

7.8.3 Իրավաբանական անձ Ապահովադրի անվանումը, գործունեության և իրավաբանական հասցեները, ՀՎՀՀ-ն, բանկային հաշվի համարը, պետական գրանցման վկայականը,

7.8.4 ՏՄ-ի հաշվառման վկայականը, մաքսային հայտարարագիրը և/կամ սեփականության իրավունքը հավաստող այլ փաստաթուղթը,

7.8.5 Լիազորված վարորդների անձը հաստատող փաստաթղթերի և վարորդական իրավունքի վկայականները,

7.8.6 ՏՄ-ի սեփականատիրոջ անձը հաստատող փաստաթուղթը (ֆիզիկական անձի դեպքում), պետական գրանցման վկայականը, ՀՎՀՀ-ն (իրավաբանական անձի դեպքում),

7.8.7 Ապահովագրողի պահանջով նաև այլ փաստաթղթեր և տեղեկություններ:

7.9 ՏՄ-ի նկատմամբ իրավատիրոջ իրավունքները (սեփականության, վարձակալության, լիզինգի իրավունք և այլն) Ապահովադրից այլ անձի անցնելու դեպքում Պայմանագրով ձեռք բերված իրավունքներն այլ անձի անցնում են միայն Ապահովագրողի համաձայնությամբ, որի վերաբերյալ Ապահովագրողի, Ապահովադրի և համապատասխան անձի միջև կազմվում և կնքվում է համապատասխան փաստաթուղթ:

7.10 Եթե ՏՄ-ի նկատմամբ սեփականության իրավունքը Ապահովադրի կողմից փոխանցվել է այլ անձի, ինչի մասին Ընկերությունը չի տեղեկացվել, ինչպես նաև առկա չի եղել Պայմանների 7.9 կետով նախատեսված Ընկերության համաձայնությունը, ապա ապահովագրական պատահարի դեպքում ապահովագրական հատուցման պահանջը ենթակա է մերժման:

8 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

8.1 Պայմանագիրը դադարում է

8.1.1 եթե ավարտվել է Պայմանագրի գործողության ժամկետը,

8.1.2 եթե բացակայում է ապահովագրության օբյեկտը կամ վերացել է ապահովագրական ռիսկը,

8.1.3 եթե Ապահովագրողը կատարել է ապահովագրական հատուցում Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի չափով,

8.1.4 եթե տեղի է ունեցել ՏՄ-ի կորուստ ոչ ապահովագրական պատահարի պատճառով,

8.1.5 եթե մահացել է Ապահովադիրը, բացառությամբ այն դեպքերի, երբ Շահառուն այլ անձ է,

8.1.6 եթե լուծարվել է իրավաբանական անձ հանդիսացող Ապահովադիրը, բացառությամբ այն դեպքերի, երբ Շահառուն այլ անձ է,

8.1.7 եթե առկա է Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությունը,

8.1.8 Ապահովադրի կամ Ապահովագրողի նախաձեռնությամբ, եթե մյուս կողմը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում՝ խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում,

8.1.9 Պայմանագրով կամ Պայմաններով կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքերով:

8.2 Կողմերն իրավունք ունեն հրաժարվել Պայմանագրից ցանկացած պահի՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 օր առաջ ծանուցելով մյուս Կողմին, պայմանով, որ հրաժարման պահին ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը չի վերացել:

8.2.1 Ապահովադրի նախաձեռնությամբ Պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում Ապահովագրողը Ապահովադրին վերադարձնում է չլրացած օրերի համար ապահովագրավճարը՝ համաձայն հետևյալ բանաձևի.

$$Ա_վ = (Ա_պ*Բ - Հ)*Պ_չ/Պ-Գ,$$

որտեղ

$Ա_վ$ - Ապահովադրին վերադարձման ենթակա ապահովագրավճար,

$Ա_պ$ - Պայմանագրով սահմանված ապահովագրավճար,

Բ - Գործակիցը հավասար է 1-ի, եթե Պայմանագրի դադարեցումը պայմանավորված է ՏՄ-ն վաճառելու հանգամանքով (առկա է առուվաճառքի պայմանագիր),

Գործակիցը հավասար է 0,8-ի՝ առուվաճառքից տարբերվող այլ հանգամանքով պայմանավորված դադարեցումների դեպքում,

Հ - Ապահովադրին վճարված կամ հաշվարկված, բայց դեռևս չվճարված հատուցումների գումար,

$Պ_չ$ - Պայմանագրի գործողության չլրացած օրերի քանակ,

Պ - Պայմանագրի գործողության օրերի քանակ,

Գ - գործավարման ծախս, որը հավասար է ($Ա_պ*Պ_չ/Պ$) մեծության 5%-ին, բայց ոչ պակաս, քան 5,000 (հինգ հազար) դրամը և ոչ ավել, քան 50,000 (հիսուն հազար) դրամը:

Ընդ որում, եթե Բ < 1, ապա Գ = 0:

Այն դեպքում, երբ Պայմանագրով ապահովագրված են մեկից ավելի ՏՄ-ներ, սակայն Պայմանագիրը դադարում է դրանց մի մասի գծով, ապա վերոնշյալ բանաձևով սահմանված հաշվարկները կատարվում են միայն այդ ՏՄ-ների մասով:

Այն պարագայում, երբ միևնույն Ապահովադիրը Ընկերությունում ունի գործող Պայմանագիր(եր) 10 և ավելի ՏՄ-ների գծով, ապա

Ապահովագրողի նախընտրությամբ վերոնշյալ Բ և Գ գործակիցները կարող են նվազեցվել կամ չկիրառվել:

8.2.2 Ապահովագրողի նախաձեռնությամբ Պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում Ապահովագրողը Ապահովադրին վերադարձնում է չլրացած օրերի համար ապահովագրավճարը՝ համաձայն հետևյալ բանաձևի՝

Ավ = (Ապ - Հ)*Պչ/Պ,

որտեղ գործոնների բացատրությունը համընկնում է Պայմանների 8.2.1 կետով սահմանված բացատրության հետ:

8.3 Ապահովադրի կողմից Պայմանագրի խախտման համար Ապահովագրողի նախաձեռնությամբ Պայմանագրի լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները:

8.4 Ապահովագրողի կողմից Պայմանագրի խախտման համար Ապահովադրի նախաձեռնությամբ Պայմանագրի լուծման դեպքում Ապահովագրողը Ապահովադրին է վերադարձնում վճարված ապահովագրավճարը՝ Պայմանագրի չլրացած օրերին համամասնորեն, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9 ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

9.1 Պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը և/կամ Շահառուն և/կամ Լիազորված վարորդը պարտավոր են՝

9.1.1 պատահարի մասին տեղեկացնել Ապահովագրողին Պայմանագրում նշված հեռախոսահամար(ներ)ով՝

9.1.1.1 պատահարի հետևանքով պատահարում ներգրավված որևէ անձի մահվան դեպքում՝ պատահարի պահից 48 ժամվա ընթացքում,

9.1.1.2 պատահարի հետևանքով պատահարում ներգրավված որևէ անձի առողջությանը վնաս պատճառված լինելու դեպքում՝ պատահարի պահից 24 ժամվա ընթացքում՝ պայմանով, որ տվյալ պատահարի հետևանքով առողջությանը վնաս պատճառված անձը պատահարի պահից 3 ժամվա ընթացքում, տվյալ պատահարի հետևանքով ստացված վնասվածքների հետ կապված, դիմել է (ինքնուրույնաբար կամ նրան տեղափոխել են) բժշկական հաստատություն, որի վերաբերյալ ապացույցները ներկայացնելու պարտականությունը կրում է Ապահովադիրը: Ընդ որում, այն դեպքում, երբ պատահարի արդյունքում առաջացել են սույն կետի միաժամանակ 9.1.1.1 ենթակետում և սույն ենթակետում

նշված հետևանքները, պատահարի մասին տեղեկացման մասով կիրառելի է սույն կետի 9.1.1.1 ենթակետով սահմանված ժամկետը,

9.1.1.3 սույն կետի 9.1.1.1 և 9.1.1.2 ենթակետերով չնախատեսված դեպքերում՝ պատահարի պահից 40 րոպեի ընթացքում:

9.1.2 Կախված պատահարի բնույթից՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք ժամվա ընթացքում հայտնել համապատասխան իրավասու պետական մարմնին (ոստիկանություն, հրշեջ ծառայություն, փրկարար ծառայություն, իրավապահ մարմիններ և այլն):

9.1.3 Չտեղաշարժել ՏՄ-ն կամ պատահարի հետ կապ ունեցող այլ առարկաները, մասերը և չլքել պատահարի վայրը մինչև համապատասխան իրավասու մարմնի (մարմինների) աշխատակիցների և Ապահովագրողի ներկայացուցչի ժամանումը (եթե Ապահովագրողն Ապահովադրին տեղեկացրել է, որ իր ներկայացուցիչը ժամանելու է դեպքի վայր) և պատահարի փաստով բոլոր անհրաժեշտ տեղեկատվության արձանագրումը, բացառությամբ Պայմանների 9.2 կետով նախատեսված դեպքերի:

9.1.4 Ապահովագրողին հնարավորության դեպքում հայտնել.

9.1.4.1 պատահարում ներգրավված ՏՄ-ների հաշվառման համարանիշերը, վարորդների տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն), ինչպես նաև իրենց հայտնի ցանկացած այլ տվյալ, որը կարող է նշանակություն ունենալ պատահարի առաջացման համար,

9.1.4.2 պատահարում ներգրավված կողմերի և ականատեսների անունները, հասցեները և անձը հաստատող փաստաթղթերի տվյալները,

9.1.4.3 պատահարի ընդհանուր նկարագրությունը (Ապահովագրողի պահանջի դեպքում):

9.1.5 Ողջամիտ և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վնասների կանխման կամ նվազեցման համար, ինչպես նաև ապահովել իր իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանությունը այլ կողմերի հետ հարաբերություններում:

9.1.6 Չընդունել որևէ պատասխանատվություն կամ չկատարել որևէ առաջարկ, խոստում կամ վճարում կամ որևէ ծախս՝ առանց Ապահովագրողի հետ նախնական գրավոր համաձայնության, ինչպես նաև Ապահովագրողի պահանջով տրամադրել պատահարի հանգամանքների պարզմանն ուղղված օժանդակություն և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

9.1.7 Գործել ի շահ Ապահովագրողի:

9.1.8 Ապահովագրողի պահանջով տրամադրել սթափության վիճակի զննության արձանագրությունը:

9.1.9 Սահմանված ձևով լրացնել և Ապահովագրողին ներկայացնել ՀԱՅՑԱՅԻՆ ԴԻՄՈՒՄ պատահարի տեղի ունենալուց հետո 2 (երկու) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ընթացքում (հայցային դիմումի օրինակը Ապահովադիրը կամ Շահառուն կարող են

ստանալ Ապահովագրողից): Սահմանված ժամկետում և կարգով Ապահովագրողին գրավոր հայցային դիմում չներկայացնելը ապահովագրական հատուցումը մերժելու հիմք է, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովադիրը և/կամ Շահառուն ներկայացրել են հայցային դիմումը ուշ ներկայացնելու պատճառներ, որոնք Ապահովագրողի կողմից հարգելի են համարվել:

9.1.10 Պահպանել ՏՄ-ն և/կամ նրա մնացորդները, վնասված մասերը հետվթարային (չվերանորոգված, չապամոնտաժված) վիճակում մինչև Ապահովագրողի ներկայացուցչի կամ վերջինիս կողմից մատնանշված մասնագետի (փորձագետի) կողմից զննումը, ինչպես նաև Պայմանների 13.2.9 կետով նախատեսված դեպքերում:

9.1.11 Ապահովագրողին անհապաղ հայտնել մեղավոր կողմից հատուցում ստանալու, ինչպես նաև երրորդ անձանց պատճառված վնասների համար իրեն ներկայացված պահանջների մասին:

9.1.12 Ապահովագրողին վերջինիս պահանջով տալ լիազորագիր դատարանում կամ պետական այլ մարմիններում Ապահովադրի շահերի ներկայացման համար:

9.2 Եթե Ապահովագրողը սահմանված ժամկետում տեղեկացվել է պատահարի տեղի ունենալու մասին և մեկնել է դեպքի վայր, ապա վերջինս, կախված դեպքի հանգամանքներից, իր հայեցողությամբ կարող է որոշել կանչել պետական իրավասու մարմիններին դեպքի վայր, թե՝ ոչ (բացառությամբ մարմնական վնասվածքով դեպքերի): Եթե Ապահովագրողը որոշում է, որ պետական իրավասու մարմինների ներկայությունը դեպքի վայրում պարտադիր չէ, ապա Ապահովագրողի ներկայացուցիչը կազմում է դեպքի մասին համապատասխան ակտ, որը ստորագրվում է ՏՄ-ի վարորդի և Ապահովագրողի ներկայացուցչի միջև: Տվյալ դեպքում Պայմանների 11.4.13 կետով սահմանված մեղավորության որոշման գործընթացը կարող է չիրականացվել:

9.3 ՏՄ-ի վարորդը պատահարը տեղի ունենալու պահից 24 ժամվա ընթացքում պարտավոր է չօգտագործել ոգելից խմիչք և Ապահովագրողի պահանջով՝ վերջինիս հաշվին, անցնել իրավասու պետական մարմնի կողմից անցկացվող սթափության վիճակի զննություն, նույնիսկ այն դեպքում, երբ վերջինս պատահարի տեղի ունենալուց հետո արդեն անցել է նման զննություն:

9.4 Հափշտակված ՏՄ-ի հայտնաբերման դեպքում Ապահովադիրը (սեփականատերը) և/կամ Շահառուն և/կամ Լիազորված վարորդը պարտավոր են այդ մասին իրենց հայտնի դառնալու պահից 24 ժամվա ընթացքում տեղեկացնել Ապահովագրողին, ինչպես նաև ՏՄ-ն վնասված հայտնաբերելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում այն ներկայացնել Ապահովագրողին՝ զննման և վնասի գնահատման համար:

9.5 Պայմանների 13.2. կետով (13.2. կետի բոլոր ենթակետերով), 9-րդ և 16-րդ գլուխներով սահմանված ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄԸ և/կամ ՉԿԱՏԱՐՈՒՄԸ կարող է հիմք հանդիսանալ ապահովագրական ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ համար:

10 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

10.1 Պատահարի տեղի ունենալու օրվանից **2 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ** Ապահովադիրը, Շահառուն կամ նրանց կողմից լիազորված անձը պարտավոր է ներկայացնել հայցային դիմումը՝ Պայմանագրին ու Պայմաններին համապատասխան:

10.2 Հայցային դիմումին կից ներկայացվող և ապահովագրական հատուցման համար անհրաժեշտ փաստաթղթերն ու ապացույցներն են,

10.2.1 Բաժին Ա-ի շրջանակներում՝

10.2.1.1 Ապահովադրի անձնագիրը,

10.2.1.2 Ապահովադրի սոցիալական քարտը կամ ՀԾՀ հատկացնելու մասին տեղեկանքը (առկայության դեպքում),

10.2.1.3 Լիազորված վարորդի անձնագիրը,

10.2.1.4 Լիազորված վարորդի վարորդական վկայականը,

10.2.1.5 Լիազորված վարորդի սոցիալական քարտը կամ ՀԾՀ հատկացնելու մասին տեղեկանքը (առկայության դեպքում),

10.2.1.6 ՏՄ-ի սեփականատիրոջ անձնագիրը,

10.2.1.7 ՏՄ-ի հաշվառման վկայագիրը կամ սեփականությունը հիմնավորող այլ փաստաթուղթ,

10.2.1.8 ՃՏՊ-ի դեպքում՝ Լիազորված վարորդի սթափության վիճակի զննման ակտ,

10.2.1.9 Պետական իրավասու մարմնի կողմից տրված դեպքի մասին արձանագրությունը (եզրակացությունը) կամ համապատասխան այլ փաստաթղթեր,

10.2.1.10 Վնասի չափը հավաստող փորձագետի եզրակացությունը (առկայության դեպքում),

10.2.1.11 քրեական գործը հարուցելու մասին որոշում, քրեական գործի վարույթը կարճելու, կասեցնելու վերաբերյալ որոշում, որոշման հիմքում ընկած փաստաթղթեր (դեպքի վայրի սխեմա, բացատրություններ, ցուցմունքներ, փորձագիտական եզրակացություն),

10.2.1.12 օրինական ուժի մեջ մտած դատական ակտ,

10.2.1.13 ՏՄ-ի նվազագույնը երկու գործարանային բանալիները, հեռակառավարման և հակաառևանգման վահանակները (սույն պահանջը վերաբերում է միայն հափշտակության դեպքերին),

10.2.1.14 Ապահովագրողի գրավոր պահանջով ցանկացած այլ փաստաթուղթ:

10.2.2 Բաժին Բ-ի շրջանակներում, եթե ՏՄ-ի Լիազորված վարորդը կամ ուղևորը մահացել է, ժառանգի (իրավահաջորդի) կողմից պետք է ներկայացվեն՝

10.2.2.1 Ժառանգի (իրավահաջորդի) անձը հաստատող փաստաթուղթը,

10.2.2.2 Ժառանգի (իրավահաջորդի) սոցիալական քարտը կամ ՀԾՀ հատկացնելու մասին տեղեկանքը (առկայության դեպքում),

10.2.2.3 բժշկական (դատաբժշկական) փորձաքննության ակտ/եզրակացությունը,

10.2.2.4 մահվան վկայականը,

10.2.2.5 ժառանգության իրավունքի վկայագիրը,

10.2.2.6 իրավասու պետական մարմնի որոշումը կամ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը,

10.2.2.7 Ապահովագրողի գրավոր պահանջով ցանկացած այլ փաստաթուղթ:

10.2.3 Բաժին Բ-ի շրջանակներում, ՏՄ-ի Լիազորված վարորդի/ուղևորի առողջությանը պատճառված վնասի հատուցման համար համապատասխանաբար Լիազորված վարորդի կամ ուղևորի կողմից պետք է ներկայացվեն՝

10.2.3.1 Դիմումատուի անձնագիրը,

10.2.3.2 Դիմումատուի սոցիալական քարտը կամ ՀԾՀ հատկացնելու մասին տեղեկանքը (առկայության դեպքում),

10.2.3.3 իրավասու պետական մարմնի որոշումը կամ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը,

10.2.3.4 բժշկական (դատաբժշկական) փորձաքննության ակտ/եզրակացությունը և առողջությանը վնաս պատճառվելու փաստը հաստատող ապացույցներ (բժշկական տեղեկանք, կոնսուլտացիոն եզրակացություն, քաղվածք ամբուլատոր քարտից, էպիկրիզ, պարակլինիկական հետազոտությունների պատասխաններ և այլն),

10.2.3.5 հաշիվ-ապրանքագիր և/կամ ՀԴՄ կտրոն կամ վճարման փաստը հաստատող այլ փաստաթուղթ (եթե ծախսը իրականացվել է Ապահովադրի կամ Ապահովադրի փոխարեն այլ անձի կողմից ինքնուրույն),

10.2.3.6 Ապահովագրողի գրավոր պահանջով ցանկացած այլ փաստաթուղթ:

10.2.4 Բաժին Գ-ի շրջանակներում, եթե Երրորդ անձը մահացել է, ժառանգի (իրավահաջորդի) կողմից պետք է ներկայացվեն՝

10.2.4.1 Ժառանգի (իրավահաջորդի) անձը հաստատող փաստաթուղթը,

10.2.4.2 Ժառանգի (իրավահաջորդի) սոցիալական քարտը կամ ՀԾՀ հատկացնելու մասին տեղեկանքը (առկայության դեպքում),

10.2.4.3 ժառանգության իրավունքի վկայագիրը,

10.2.4.4 բժշկական (դատաբժշկական) փորձաքննության ակտ/եզրակացությունը,

10.2.4.5 մահվան վկայականը,

10.2.4.6 իրավասու պետական մարմնի որոշումը կամ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը,

10.2.4.7 Ապահովագրողի գրավոր պահանջով ցանկացած այլ փաստաթուղթ:

10.2.5 Բաժին Գ-ի շրջանակներում, Երրորդ անձի առողջությանը պատճառված վնասի հատուցման համար, վերջինիս կողմից պետք է ներկայացվեն՝

10.2.5.1 Դիմումատուի անձնագիրը,

10.2.5.2 Դիմումատուի սոցիալական քարտը կամ ՀԾՀ հատկացնելու մասին տեղեկանքը (առկայության դեպքում),

10.2.5.3 իրավասու պետական մարմնի որոշումը կամ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը,

10.2.5.4 Բժշկական (դատաբժշկական) փորձաքննության ակտ/եզրակացությունը, առողջությանը վնաս պատճառվելու փաստը հաստատող ապացույցներ (բժշկական տեղեկանք, կոնսուլտացիոն եզրակացություն, քաղվածք ամբուլատոր քարտից, էպիկրիզ, պարակլինիկական հետազոտությունների պատասխաններ և այլն),

10.2.5.5 հաշիվ-ապրանքագիր և/կամ ՀԴՄ կտրոն կամ վճարման փաստը հաստատող այլ ապացույց (եթե ծախսը իրականացվել է Ապահովադրի կամ Ապահովադրի փոխարեն այլ անձի կողմից ինքնուրույն),

10.2.5.6 Ապահովագրողի գրավոր պահանջով ցանկացած այլ փաստաթուղթ:

10.2.6 Բաժին Գ-ի շրջանակներում Երրորդ անձի գույքին, այդ թվում՝ տրանսպորտային միջոցին պատճառված վնասի հատուցման համար, Երրորդ անձի կողմից պետք է ներկայացվեն՝

10.2.6.1 Դիմումատուի անձնագիրը,

10.2.6.2 Դիմումատուի սոցիալական քարտը կամ ՀԾՀ հատկացնելու մասին տեղեկանքը (առկայության դեպքում),

10.2.6.3 Պետական իրավասու մարմնի կողմից տրված դեպքի մասին արձանագրությունը (եզրակացությունը) կամ համապատասխան այլ փաստաթղթեր,

10.2.6.4 վնասի վերականգնման կամ գույքի վերանորոգման համար Երրորդ անձի կողմից կատարված ծախսը հավաստող հաշիվ-ապրանքագիր և/կամ ՀԴՄ կտրոն կամ վճարման փաստը հավաստող այլ ապացույց (եթե Ապահովագրողը համաձայնվել է, որ Երրորդ անձն այդ ծախսն իրականացնի ինքնուրույն),

10.2.6.5 Գույքի սեփականության վկայականը,

10.2.6.6 Վնասված տրանսպորտային միջոցի վարորդի անձնագիրը,

10.2.6.7 Վնասված տրանսպորտային միջոցի վարորդի վարորդական վկայականը,

10.2.6.8 Ապահովագրողի գրավոր պահանջով ցանկացած այլ փաստաթուղթ:

10.3 Հատուցում ստանալու վերաբերյալ հայցային դիմումը Ապահովագրողին համապատասխան անձի կողմից ներկայացվելուց հետո վերջինս պարտավոր է երկու ամսվա ընթացքում ներկայացնել նաև Պայմանների 10.2 կետի բոլոր ենթակետերում նշված համապատասխան փաստաթղթերը, որոնք Ապահովագրողին չներկայացվելու դեպքում վերջինս իրավասու է մերժել վերոնշյալ հայցային դիմումը:

10.4 Եթե առկա լինեն այնպիսի հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում ներկայացրած անձի կողմից Պայմանների 10.3 կետում նշված ժամկետում չներկայացված փաստաթղթերի ներկայացումը, ապա վերջինն այդ հանգամանքների մասին պարտավոր է, մինչև այդ ժամկետի լրանալը, գրավոր տեղեկացնել Ապահովագրողին՝ ներկայացնելով անհնարինությունը հիմնավորող ապացույցները: Նշված հանգամանքների մասին սահմանված ժամկետում և կարգով տեղեկացում չլինելու դեպքում Ապահովագրողը մերժում է ապահովագրական հատուցումը:

10.5 Եթե պատահարի գծով առկա է քաղաքացիական, քրեական, դատական կարգով վարչական գործ կամ նույն պատահարի վերաբերյալ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից պատահարում մեղավորությունը քննող գործ և ապահովագրական հատուցման վճարումը կախված է այդ գործի ելքից, ապա փորձաքննությունների նշանակման և հատուցման որոշման կայացման ժամկետները կասեցվում են մինչև տվյալ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրը կամ մինչև Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից որոշում կայացնելու և այն կողմերի համար պարտադիր դառնալու օրը:

10.6 Ապահովագրողն իրավունք ունի վերանայել արդեն իսկ կայացված որոշումը, եթե ի հայտ են եկել ապահովագրական գործի քննության համար էական նշանակություն ունեցող ապացույցներ (հանգամանքներ), որոնք ապահովագրական հատուցման որոշման վերանայման հիմք են: Ապահովադրի կողմից նման ապացույցներ կարող են ներկայացվել ապահովագրական հատուցման (մերժման) որոշման կայացումից հետո վեց ամսվա ընթացքում:

10.7 Պայմաններով նախատեսված համապատասխան անձի կողմից հայցային դիմումին կից ներկայացվող փաստաթղթի վրա Ապահովագրողը գրառում է կատարում ստացման ամսաթվի մասին:

10.8 Ապահովագրողին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը որոշում է կայացնում հայցային դիմումի բավարարման կամ մերժման վերաբերյալ: Կայացված որոշումը Ապահովագրողի կողմից ուղարկվում է հայցային դիմումի մեջ Ապահովադրի (Շահառուի) նշած էլեկտրոնային փոստի հասցեին: Նման հասցեի բացակայության

դեպքում որոշումն իրավասու անձին հանձնվում է առձեռն (ստացման մասին ստորագրությամբ) կամ ուղարկվում է հայցային դիմումում նշված փոստային հասցեով:

10.9 Հայցի բավարարման դեպքում Ապահովագրողի կողմից հատուցման վճարումը կատարվում է տվյալ հայցի կարգավորման վերաբերյալ որոշման կայացումից հետո 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում:

10.10 Ապահովադիրը (Շահառուն, Լիազորված վարորդը) կրում է իր կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերի, ներառյալ՝ պատճենների, ոչ հավաստի և կեղծ լինելու բոլոր իրավական հետևանքները:

11 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՈՒՄԸ

11.1 Ապահովագրական հատուցումը Ապահովադրին կամ Շահառուին (ներառյալ՝ մասնագիտացված կազմակերպություններին, բուժհաստատություններին և այլն) վճարվում է ՀՀ դրամով, որը սակայն չի կարող գերազանցել Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարը:

11.2 **Բաժին Ա-ով ապահովագրական հատուցման վնասի չափը որոշվում է հետևյալ կերպ.**

11.2.1 Ապահովագրողն իրականացնում է վնասի հատուցումը՝ համաձայն ստորև բերված բանաձևի.

$$Հ = ՎՄ * \frac{ԱԳ}{ԱԱ} * \frac{ԱԱ_{պ}}{ԱԱ} - ՉԳ$$, որտեղ

Հ – Հատուցվող վնասի չափ,
ՎՄ – վնասի մեծություն,
ԱԳ – ապահովագրական գումար պատահարի օրվա դրությամբ,
ԱԱ – ՏՄ-ի շուկայական արժեքը պայմանագրի կնքման օրվա դրությամբ,
$ԱԱ_{պ}$ – ՏՄ-ի շուկայական արժեքը ապահովագրական պատահարի օրվա դրությամբ,
ՉԳ – ոչ պայմանական չհատուցվող գումար:

$\frac{ԱԱ_{պ}}{ԱԱ}$ հարաբերակցությունը 1–ից մեծ լինելու դեպքում բանաձևում ընդունվում է 1 արժեքը:

11.2.2 Եթե ՏՄ-ն օգտագործման համար լիովին ոչ պիտանի է, այսինքն՝ դրա վերանորոգումը տեխնիկապես անհնարին է կամ տնտեսապես չհիմնավորված (վերանորոգման ծախսերը ≥ ՏՄ-ի շուկայական արժեքից նվազեցրած պիտանի դետալների արժեք), ապա վճարման ենթակա հատուցումը կհաշվարկվի՝ համաձայն ստորև բերված բանաձևի՝

$$Հ = ԱԳ * \frac{ԱԱ_{պ}}{ԱԱ} - ՊԴ - ՉԳ,$$ որտեղ

Հ – Հատուցվող վնասի չափ,
ԱԳ – ապահովագրական գումար պատահարի օրվա դրությամբ,
ԱԱ – ՏՄ-ի շուկայական արժեքը պայմանագրի կնքման օրվա դրությամբ,
$ԱԱ_{պ}$ – ՏՄ-ի շուկայական արժեքը ապահովագրական պատահարի օրվա դրությամբ,
ՊԴ – պիտանի դետալներ,
ՉԳ – ոչ պայմանական չհատուցվող գումար:
$\frac{ԱԱ_{պ}}{ԱԱ}$ հարաբերակցությունը 1–ից մեծ լինելու դեպքում բանաձևում ընդունվում է 1 արժեքը:

11.2.3 ՏՄ-ի սեփականատերը պահպանում է ՏՄ-ի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքը 11.2.2 կետով նախատեսված դեպքերում:

11.2.4 Ընկերությունը չի հատուցում Պայմանների 11.2.3 կետում նշված ՏՄ-ի (օգտագործման համար լիովին ոչ պիտանի) ուտիլիզացիայի կամ վերականգնման համար կատարված ծախսերը:

11.2.5 Ապահովագրական պատահարի արդյունքում ՏՄ-ին հասցված վնասի չափը գնահատվում է Ապահովագրողի կամ վերջինիս մատնանշած մասնագետի (փորձագետի) կողմից, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են ապահովագրական հատուցումը մերժելու հիմքեր:

11.2.6 Ապահովագրողն իր ընտրությամբ կարող է վերանորոգել, փոխարինել ՏՄ-ն կամ դրա վնասված դետալը կամ դրամային տեսքով հատուցել վերջինիս վնասը կամ կորուստը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

11.2.7 Ապահովագրողի կողմից վերանորոգման տարբերակը ընտրվելու դեպքում Ապահովադիրը կամ Շահառուն պարտավոր են Ապահովագրողին վճարել Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարը և Պայմանների 11.2.8.2 կետով սահմանված կարգով հաշվարկված մաշվածության արժեքը հատուցման որոշման մասին տեղեկանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Կողմերի միջև առկա չէ այլ գրավոր համաձայնություն:

11.2.8 Ապահովագրական պատահարի արդյունքում ՏՄ-ին հասցված վնասի գնահատումն իրականացվում է հետևյալ եղանակներով.

11.2.8.1 որպես առաջնային մոտեցում՝ օգտագործվում է համանման արտադրության և երկրորդային շուկայում վաճառվող օգտագործված պահեստամասերի արժեքները,

11.2.8.2 որպես երկրորդային մոտեցում՝ Ապահովագրողի հայեցողությամբ ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը.

- օգտագործվում է նոր, բայց ոչ գործարանային պահեստամասերի արժեքները,

- օգտագործվում է գործարանային նոր պահեստամասերի արժեքները՝ կիրառելով մաշվածություն ստորև բերված աղյուսակում նշված թվերին համապատասխան տոկոսի (%) չափ:

ԱՊՀ երկրներում արտադրված ՏՄ-ների համար						
Վազքը (հազ.կմ)	**Տրանսպորտային միջոցի տարիքը (տարի)**					
	0-2	3-4	5	6-8	9-10	11 և ավելի
0-40	Չի կիրառվում	13	15	17	21	24
40-60	14	16	18	20	23	27
60-120	16	20	22	24	28	30
120-140	18	22	24	27	29	31
140-160	20	23	26	28	29	32
160-180	22	26	27	30	31	33
180-200	24	27	29	31	32	33
200-250	25	28	30	32	33	35
250-350	32	33	36	38	38	40
350 - ից ավելի	40	42	44	46	46	47

ԱՊՀ երկրներից բացի այլ երկրներում արտադրված ՏՄ-ների համար						
Վազքը (հազ.կմ)	**Տրանսպորտային միջոցի տարիքը (տարի)**					
	0-2	3-4	5	6-8	9-10	11 և ավելի
0-40	Չի կիրառվում	20	24	27	30	33
40-60	20	23	27	30	33	37
60-120	23	26	30	33	36	40
120-140	26	29	33	36	39	43
140-160	29	32	37	39	42	46
160-180	32	35	40	42	45	49
180-200	35	38	43	45	48	52
200-250	38	41	46	48	51	55

250-350	41	44	49	51	54	58
350 - ից ավելի	44	47	52	54	57	61

որպես ՏՄ-ի տարիք ընդունվում է փորձաքննության իրականացման տարեթվի և տվյալ ՏՄ-ի արտադրության տարեթվի տարբերությունը:

11.2.9 Ապահովագրական պատահարի արդյունքում ՏՄ-ին հասցված վնասի գնահատումն իրականացվում է Պայմանների 11.2.8.2 կետով սահմանված եղանակով, եթե Ապահովագրողի գնահատմամբ հնարավոր չէ կիրառել Պայմանների 11.2.8.1 կետով սահմանված եղանակը:

11.2.10 Եթե ՏՄ-ի վազքի ցուցիչի հիման վրա տեխնիկապես հնարավոր չէ (չգործելու, վնասված լինելու կամ այլ նմանատիպ պատճառով) վերծանել ՏՄ-ի վազքը կամ ՏՄ-ի վազքի ցուցիչը պարունակում է հինգ կամ պակաս նիշ, ինչի պատճառով հնարավոր չէ ստույգ որոշել ՏՄ-ի իրական վազքը, ապա 11.2.8 կետի կիրառման նպատակով համարվում է, որ տվյալ ՏՄ-ի վազքը արտադրման ամսաթվից մինչև փորձագիտական եզրակացության կազմման օրը յուրաքանչյուր տարվա համար կազմել է 60 հազար կիլոմետր (ոչ ամբողջական տարվա համար տարեկան վազքը նվազեցվում է չլրացած օրերի քանակին համամասնորեն):

11.2.11 Եթե ՏՄ-ն ապահովագրված է լրիվ արժեքով, և Ապահովագրական պատահարի առաջացման մեջ (բացառությամբ՝ հափշտակության դեպքերի) Ապահովադրի/Լիազորված վարորդի մեղավորությունը ամբողջությամբ բացակայում է (երրորդ անձի կամ անձանց ամբողջական մեղավորությունը պարտադիր է), ապա Ապահովագրողն ապահովագրական հատուցում իրականացնելիս չի կիրառում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարը՝ պայմանով, որ Ապահովադիրը (Շահառուն) տեղի ունեցած պատահարում բացահայտված մեղավոր երրորդ անձի կողմից պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունքը պատշաճ կերպով կփոխանցի Ապահովագրողին և որևէ կերպ չի խոչընդոտի Ապահովագրողի կողմից այդ իրավունքի իրականացմանը: Սույն կետը գործում է, եթե այն նախատեսված է Պայմանագրով:

11.2.12 Ապահովագրողը կարող է հատուցել նաև ապահովագրական պատահարի ժամանակ ՏՄ-ին պատճառվելիք վնասը նվազեցնելու համար կատարված անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը, ինչպես նաև ապահովագրական պատահարի հետևանքով ՏՄ-ն դեպքի վայրից քարշակով տեղափոխման ծախսերը (եթե ՏՄ հնարավոր չէ տեղաշարժել վարելու միջոցով) հետևյալ սահմանաչափերով՝ Երևան քաղաքի ներսում ՏՄ-ի տեղափոխման համար հատուցվող գումարը չի կարող գերազանցել 10,000 ՀՀ դրամը, իսկ Երևան քաղաքից դուրս ՏՄ-ի տեղափոխման համար՝ 40,000 ՀՀ դրամը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Սույն

կետում նշված ծախսերը հատուցվում են ծախսը հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա:

11.2.13 Նույն ռիսկից ՏՄ-ի ապահովագրության՝ մեկից ավելի պայմանագրերի առկայության դեպքում (կրկնակի ապահովագրություն) բոլոր պայմանագրերով վճարվող ապահովագրական հատուցման գումարների հանրագումարը չպետք է գերազանցի ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ՏՄ-ի շուկայական արժեքը: Այդ դեպքում Ապահովագրողի ապահովագրական հատուցման չափը հաշվարկվում է Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի և նույն ՏՄ-ի՝ բոլոր այլ ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարների հանրագումարի հարաբերության համամասնությամբ:

11.2.14 Եթե հափշտակված ՏՄ-ն հայտնաբերվել է մինչև ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշում կայացվելը, ապա հափշտակության հիմքով ներկայացված ապահովագրական հատուցման պահանջը ենթակա է մերժման: Այս դեպքում հատուցման ենթակա է միայն ՏՄ-ին պատճառված գույքային վնասը՝ հաշվարկված Պայմաններով սահմանված կարգով:

11.2.15 Եթե ՏՄ-ն հայտնաբերվել է հափշտակության հիմքով ներկայացված հատուցման պահանջի հիման վրա ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշում կայացվելուց հետո, ապա Ապահովադիրը հափշտակված ՏՄ-ի հայտնաբերման մասին տեղեկանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է Ապահովագրողին հետ վերադարձնել արդեն իսկ վճարված ապահովագրական հատուցումն ամբողջությամբ: Այն դեպքում, երբ ՏՄ-ն հափշտակման արդյունքում վնասվել է, ապա հետ վերադարձման ենթակա գումարի չափը նվազեցվում է ՏՄ-ին պատճառված վնասի չափով, որը հաշվարկվում է Պայմաններով սահմանված կարգով:

11.2.16 Ապահովադրի (սեփականատիրոջ), Շահառուի և/կամ Լիազորված վարորդի կողմից Պայմանների 9.4 կետով նախատեսված ժամկետներում ՏՄ-ն Ապահովագրողի զննմանը չներկայացվելու դեպքում Ապահովադիրը և/կամ Շահառուն զրկվում են Պայմաններով նախատեսված գույքային վնասների հատուցում ստանալու կամ հատուցված գումարի հետվերադարձման դեպքում ՏՄ-ին պատճառված վնասների չափով հատուցված գումարի նվազեցված մասը ստանալու իրավունքից:

11.2.17 Մինչև ապահովագրական հատուցման վճարումը ՏՄ-ի հայտնաբերման դեպքում, հափշտակության հետևանքով ՏՄ-ին պատճառված գույքային վնասը գնահատվում է որպես երրորդ անձանց անօրինական գործողությունների հետևանքով պատճառված վնաս (Պայմանների 4.1.1.6. կետ):

11.3 **Բաժին Բ-ով ապահովագրական հատուցումը հաշվարկվում է հետևյալ սկզբունքով.** ՏՄ-ի Լիազորված վարորդի և (կամ) ուղևորների՝

11.3.1 Մահվան դեպքում՝ յուրաքանչյուր անձի համար սահմանված ապահովագրական գումարի 100%-ի չափով:
11.3.2 Առաջին խմբի հաշմանդամության դեպքում՝ յուրաքանչյուր անձի համար սահմանված ապահովագրական գումարի 100%-ի չափով,
11.3.3 Երկրորդ խմբի հաշմանդամության դեպքում՝ Ապահովագրված անձի համար սահմանված ապահովագրական գումարի 70%-ի չափով,
11.3.4 Երրորդ խմբի հաշմանդամության դեպքում՝ Ապահովագրված անձի համար սահմանված ապահովագրական գումարի 50%-ի չափով:
11.3.5 Հաշմանդամ երեխայի դեպքում՝ Ապահովագրված անձի համար սահմանված ապահովագրական գումարի 50%-ի չափով:
11.3.6 ՏՄ-ի շահագործման ընթացքում ծագած ապահովագրական պատահարի հետևանքով ՏՄ-ի վարորդի և/կամ ուղևորների աշխատունակության ժամանակավոր կորստի դեպքում վճարվում է ապահովագրական հատուցում պատահարի տեղի ունենալու օրվանից հետո սկսած 7-րդ օրվանից՝ յուրաքանչյուր անաշխատունակ օրվա համար Ապահովագրված անձի համար սահմանված ապահովագական գումարի 0.2%-ի չափով, սակայն ոչ ավել, քան յուրաքանչյուր անձի համար սահմանված ապահովագրական գումարի 20%-ի չափով յուրաքանչյուր պատահարի դեպքում:
11.3.7 Բժշկական ծախսերի դեպքում Պայմանագրով հատուցվում են Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով առաջացած ամբուլատոր և/կամ ստացիոնար բուժման ծախսերը, մասնավորապես՝

- բժշկա-տրանսպորտային,
- վիրահատությունների,
- ընդհանուր հիվանդասենյակի,
- բժշկի կողմից նշանակված լաբորատոր և գործիքային հետազոտությունների, դեղամիջոցների, վիրակապակական, անշարժացնող միջոցների հետ կապված անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը (եթե ԱՊՊԱ շրջանակներում տվյալ ծախսերը հատուցման ենթակա չեն):

Սույն կետի իմաստով բժշկական ծախսերը Պայմանագրի շրջանակներում ենթակա են հատուցման ոչ ավել, քան յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար 200,000 ՀՀ դրամի չափով:
11.3.8 Յուրաքանչյուր նստատեղի/անձի համար վճարման ենթակա առավելագույն ապահովագրական գումարը (սահմանաչափը) նշվում է Պայմանագրում:
11.3.9 Դժբախտ պատահարի հետևանքով ՏՄ-ի վարորդի և (կամ) ուղևորների մահվան դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է մահացածի ժառանգներին (իրավահաջորդներին), իսկ եթե ժառանգները (իրավահաջորդները) մի քանիսն են, ապա վճարումը կատարվում է նրանց հավասար չափաբաժնով կամ լիազորագրի հիման վրա՝ նրանցից մեկին:

11.4 **Բաժին Գ-ով ապահովագրական հատուցման չափը որոշվում է հետևյալ կերպ.**

11.4.1 Բաժին Գ-ով Ապահովագրական հատուցման չափը որոշվում է Ապահովագրողի կամ վերջինիս կողմից մատնանշված փորձագետի կողմից կամ կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ դատական կարգով:

11.4.2 Պայմանների իմաստով առողջությանը պատճառված վնաս է համարվում տուժած Երրորդ անձի բժշկական հաստատություններում մնալու, ախտորոշման, բուժվելու, առողջության վերականգնման հետ կապված, ինչպես նաև բժշկի ցուցումով դեղամիջոցներ, բժշկական պարագաներ ձեռք բերելու, պրոթեզավորման, տեխնիկական այլ միջոցների (հենակ, շարժական սայլակ, լսողական ապարատ և այլն) ձեռքբերման հետ կապված անհրաժեշտ, ողջամիտ և փաստացի կատարված ծախսերը:

11.4.3 Բաժին Գ-ով առողջությանը պատճառված վնասի հատուցում տրամադրելիս հիմք է ընդունվում Ապահովագրողի բժիշկ-փորձագետի կողմից կազմված ակտը:

11.4.4 Եթե Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդը իր հաշվին կատարում է տուժած Երրորդ անձանց առողջությանը պատճառված վնասի հետ կապված ծախսեր և դրանց հետ կապված, Պայմաններով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնում է Ապահովագրողին, ապա վերջինս ստուգում և գնահատում է ախտորոշման և կատարված ծախսերի համապատասխանությունը, անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը, ինչպես նաև դրանց հիմնավորվածությունը և ողջամտությունը (ողջամիտ գինը), և Պայմանագրով ու Պայմաններով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետներում կայացնում է հայցի կարգավորման համապատասխան որոշում: Պայմանների իմաստով անհրաժեշտ և ողջամիտ են համարվում այն ծախսերը, որոնք իրականացվել են բացառապես բժշկի գիտականորեն հիմնավորված և պատճառաբանված ցուցումով և ուղղակիորեն պայմանավորված են եղել ապահովագրական պատահարից տուժած Երրորդ անձի առողջությանը պատճառված վնասի բնույթով ու ծանրության աստիճանով:

11.4.5 Բաժին Գ-ի իմաստով ծախսերի ողջամտությունը (ողջամիտ գինը) որոշվում է Ապահովագրողի կողմից ընտրված գործընկեր բժշկական հաստատությունների հետ կնքված և գործող պայմանագրերով նախատեսված գների հետ համեմատության արդյունքում: Կատարված ծախսերի՝ հիշյալ գների միջինից բարձր գնի դեպքում Ապահովագրողը ընտրում է հիշյալ գների միջինը: Սույն կետով նախատեսված ծախսերը ՀՀ տարածքից դուրս իրականացվելու դեպքում հատուցումը վճարվում է Ապահովագրողի կողմից որոշված ողջամիտ գնով:

11.4.6 Բաժին Գ-ի իմաստով կյանքին պատճառված վնաս է համարվում հուղարկավորության հետ կապված ծախսը, որի հատուցման առավելագույն չափը կազմում է 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ: Սույն կետում նշված ծախսերի հատուցումը վճարվում է մահացածի ժառանգներին (իրավահաջորդներին), իսկ եթե

ժառանգները (իրավահաջորդները) մի քանիսն են, ապա վճարումը կատարվում է նրանց հավասար չափաբաժնով կամ լիազորագրի հիման վրա՝ նրանցից մեկին: Սույն կետով նախատեսված հատուցման որոշումը ենթակա է մերժման, եթե ԱՊՊԱ շրջանակներում անձի հուղարկավորության հետ կապված ծախսերը ենթակա են հատուցման:

11.4.7 Ապահովագրական պատահարի հետևանքով կյանքին և առողջությանը վնաս պատճառվելու փաստը և դրա չափը կարող են հավաստվել միայն համապատասխան դատաբժշկական փորձաքննության ակտով/եզրակացությամբ և բժշկական հաստատության կողմից տրված պատշաճ փաստաթղթերով և/կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:

11.4.8 Գույքի, տրանսպորտային միջոցի (Բաժին Գ-ի շրջանակներում այսուհետ՝ Գույք) կորստի կամ դրան պատճառված վնասների հետ կապված ծախսեր են համարվում կորսված կամ վնասված Գույքի մինչպատահարային համանման վիճակի բերելու համար անհրաժեշտ ծախսերը, այն է՝ Գույքի և/կամ դրա դետալների փոխարինման, տեղափոխման, վերանորոգման և/կամ վերականգնման ծախսերը՝ հիմք ընդունելով պատահարի օրվա դրությամբ դրանց շուկայական արժեքը:

11.4.9 Պայմանների իմաստով Գույքը համարվում է կորսված, եթե դրա վերանորոգումը տեխնիկապես անհնարին է կամ տնտեսապես չհիմնավորված (վերանորոգման ծախսերը ≥ Գույքի շուկայական արժեքից հանած պիտանի դետալների արժեք): Գույքի կորստի դեպքում հատուցումը իրականացվում է համաձայն հետևյալ բանաձևի՝

$$Հ = ԱԱ_{պ} - ՊԴ,$$ որտեղ

Հ – Հատուցվող վնասի չափ,

$ԱԱ_{պ}$ – Գույքի շուկայական արժեք ապահովագրական պատահարի օրվա դրությամբ,

ՊԴ – Պիտանի դետալներ:

11.4.10 Գույքի կորստի կամ վնասի հատուցման պահանջի դեպքում Ապահովագրողի կողմից վճարման ենթակա գումարը պետք է հիմնված լինի պատահարի օրվա դրությամբ ՀՀ-ում նմանատիպ գույքի, դետալի, պահեստամասի կամ սարքավորման շուկայական արժեքի վրա:

11.4.11 Գույքի վնասվելու դեպքում վնասի չափը որոշվում է՝ ելնելով այն վերականգնելու/վերանորոգելու համար անհրաժեշտ և ողջամիտ ծախսերի չափից: Վնասված դետալները, պահեստամասերը և/կամ սարքավորումները փոխարինվում են (հաշվի են առնվում դրանց փոխարինման հետ կապված ծախսերը) միայն այն դեպքում, երբ դրանց վերականգնելը/վերանորոգելը տնտեսապես հիմնավորված չէ կամ եթե դրանց վերականգնելու/վերանորոգելու արդյունքում դրանք անհնար է բերել հետագա օգտագործման համար պիտանի վիճակի:

11.4.12 Տրանսպորտային միջոցներին վնաս պատճառվելու դեպքում ապահովագրական հատուցման չափը որոշելիս Ապահովագրողը իրավասու է հաշվի առնել վնասված գույքի և/կամ դրա դետալների, պահեստամասերի և/կամ սարքավորումների մաշվածությունը՝ համաձայն Պայմանների 11.2.8.2 կետի:
11.4.13 Ապահովագրողը կարող է հատուցել Ապահովադրի կողմից կատարված փաստաբանական ծառայությունների խելամիտ վճարները, որոնք կատարվել են ապահովագրական պատահարի հետ կապված հանգամանքները իրավապահ մարմիններին ներկայացնելու կամ դատարանում ապահովագրական պատահարի հետ կապված գործի ներկայացման համար՝ ոչ ավել, քան Բաժին Գ-ի համար սահմանված ապահովագրական գումարի 10%-ի չափով:
11.4.14 Քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված լինելու դեպքում գույքին պատճառված վնասների չափը գնահատվում է, և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ այդպիսի գործ հարուցված չլինելու կամ այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ չընդունվելու դեպքում իրավասու պետական մարմինների կողմից կազմված համապատասխան որոշմամբ/եզրակացությամբ կամ համապատասխան որակավորում և/կամ լիազորություն ունեցող անձանց կամ կազմակերպությունների եզրակացությամբ/որոշմամբ:
11.4.15 Տուժած Երրորդ անձի կյանքին կամ առողջությանը և Գույքին միաժամանակ վնաս պատճառվելու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է ապահովագրական գումարի սահմաններում՝ նախ կյանքին կամ առողջությանը հասցված վնաս(ներ)ի համար, այնուհետ՝ Գույքի համար: Մեկից ավելի տուժողների դեպքում յուրաքանչյուր տուժողին ապահովագրական հատուցումն իրականացվում է ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված ընդհանուր վնասի մեջ յուրաքանչյուր տուժողի կրած վնասի համամասնությամբ:
11.4.16 Ապահովագրական հատուցումը տուժած Երրորդ անձին (նրա ժառանգներին (իրավահաջորդներին)) վճարվում է Պայմանագրի Բաժին Գ-ի համար նշված ապահովագրական գումարի սահմաններում:

12 ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ

12.1 Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը (Շահառուն, Լիազորված վարորդը) պարտավոր է Ապահովագրողին գրավոր ձևով մեկ աշխատանքային օրվա ընթացքում հայտնել Պայմանագիրը կնքելիս կամ դրա գործողության ընթացքում իրեն հայտնի էական հանգամանքների փոփոխությունների

մասին, եթե այդ փոփոխությունները կարող են էապես ազդել ապահովագրական ռիսկի մեծանալու կամ նվազելու վրա:

12.2 Պայմանների 12.1 կետի իմաստով էական հանգամանքներ են համարվում՝

12.2.1 ՏՄ-ի նկատմամբ վարձակալության, լիզինգի, գրավի կամ քաղաքացիաիրավական բնույթի այլ պայմանագիր կնքելը,

12.2.2 ՏՄ-ի հաշվառման փաստաթղթերի, բանալիների, ազդանշանային համակարգի, հեռակառավարման վահանակի և գրանցման համարանիշների կորուստը կամ հափշտակությունը,

12.2.3 ՏՄ-ն օգտագործելու, շահագործելու և պահելու պայմանների էական փոփոխությունը,

12.2.4 ՏՄ-ի շահագործման նպատակի փոփոխությունը:

12.3 Ապահովագրական ռիսկի փոփոխմանը հանգեցնող հանգամանքների մասին տեղեկացվելուց հետո Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել կնքելու Պայմանագրի պայմանների փոփոխության և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի (ռիսկի աստիճանի փոփոխմանը համաչափ) վճարման մասին համաձայնագիր:

12.4 Եթե Ապահովադիրը ռիսկի աստիճանի փոփոխման մասին Պայմաններով սահմանված կարգով և ժամկետներում տեղյակ չի պահում Ապահովագրողին կամ հրաժարվում է Պայմանագրի պայմանների փոփոխության մասին համաձայնագիր կնքելուց և/կամ ռիսկի մեծացմանը համաչափ համապատասխան լրացուցիչ ապահովագրավճար չի վճարում, ապա Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը և/կամ վաղաժամկետ միակողմանի լուծել Պայմանագիրը, որի դեպքում վճարված Ապահովագրավճարը հետ չի վերադարձվում:

13 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13.1 Ապահովադիրն իրավունք ունի՝

13.1.1 Ապահովագրողից պահանջել պետական գրանցման և գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերը,

13.1.2 Ապահովագրողի հետ հարաբերություններում հանդես գալ ապահովագրական միջնորդի (բրոքեր կամ գործակալ) միջոցով,

13.1.3 Պայմանագրով սահմանել Լիազորված վարորդների ցանկը կամ դրանցում կատարել փոփոխություններ,

13.1.4 ծանոթանալ սույն Պայմաններին,

13.1.5 իր ցանկությամբ ընտրել Ապահովագրողի կողմից առաջարկվող ապահովագրական ռիսկերը,

13.1.6 Պայմանագրի գործողության ընթացքում ավելացնել ապահովագրական գումարի մեծությունը, եթե Պայմանագիրը կնքվել է ՏՄ-ի ոչ լրիվ արժեքի չափով,
13.1.7 Պայմանագիրը կնքել հօգուտ այլ անձի (Շահառուի),
13.1.8 Պայմանագրի կորստի կամ վնասվածքի դեպքում ստանալ Պայմանագրի կրկնօրինակը,
13.1.9 իր և Ապահովագրողի միջև ծագած տարաձայնությունների դեպքում դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

13.2 Ապահովադիրը պարտավոր է՝

13.2.1 Պատշաճ կերպով կատարել Պայմանագրով ստանձնած իր պարտականությունները,
13.2.2 Պայմանագրի և Պայմանների մասին տեղեկացնել Շահառուին, Լիազորված վարորդին կամ ՏՄ-ի շահագործման/պահպանման մեջ շահագրգռվածություն ունեցող անձանց: Նշված անձանց կողմից Պայմանագրի և Պայմանների պահանջների չկատարումը դիտվում է որպես Ապահովադրի կողմից Պայմանագրի և Պայմանների պահանջների չկատարում:
13.2.3 Պայմանագրում նշված կարգով և ժամկետներում վճարել ապահովագրավճարը,
13.2.4 Պայմանագրի կնքման ժամանակ հայտնել անհրաժեշտ և ստույգ տվյալներ ապահովագրվող ՏՄ-ի և հավանական իրադարձությունների վերաբերյալ, որոնք նշանակություն ունեն ապահովագրական պատահարի ի հայտ գալու հավանականության որոշման համար,
13.2.5 Ապահովագրողին անհապաղ հայտնել Պայմանագիրը կնքելիս տրամադրված տեղեկատվության՝ իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին, մասնավորապես՝ ՏՄ գրավադրման, վարձակալության տրամադրման, թափքի, շարժիչի և հենասահքի փոփոխման, բանալիների, հեռակառավարման վահանակի, հակաառևանգման համակարգի/սարքավորման և գրանցման փաստաթղթերի կորստի, ՏՄ օգտագործման նշանակությունը փոխելու (օրինակ՝ տաքսի, պատվերով ուղևորափոխադրում, մրցույթների մասնակցություն և այլն) և այլ այնպիսի հանգամանքների մասին, որոնք ուղղակիորեն կարող են ազդել ռիսկի գնահատման վրա,
13.2.6 Ապահովագրողին տեղեկացնել ապահովագրության օբյեկտի վերաբերյալ նույն ռիսկերից մյուս բոլոր ապահովագրության պայմանագրերի առկայության մասին,
13.2.7 Ապահովագրողի պահանջից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս հաշվին ՏՄ-ն ներկայացնել համակարգչային և/կամ փորձագիտական զննման,

13.2.8 Ապահովագրողի և/կամ փորձագետների (այդ թվում՝ արտասահմանյան) համապատասխան գրավոր կամ բանավոր պահանջը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում վերջիններիս ներկայացնել ՏՄ-ն հետվթարային վիճակում և այնպիսի պայմաններում և/կամ տարածքում, որը հնարավոր կդարձնի ՏՄ-ի զննումը և/կամ հետքաբանական փորձաքննության անցկացումը,

13.2.9 Ապահովագրական հատուցում վճարելու (մերժելու) որոշումից հետո նույն պատահարի գծով ապահովագրական հատուցման նոր պահանջ ունենալու դեպքում Ապահովագրողին ներկայացնել նոր գրավոր դիմում, որից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողի պահանջով ՏՄ-ն հետվթարային (չվերանորոգված, չապամոնտաժված) վիճակում ներկայացնել Ապահովագրողին (վերջինիս կողմից մատնանշած փորձագետին)՝ զննություն իրականացնելու և անհրաժեշտության դեպքում հետքաբանական փորձաքննություն նշանակելու համար:

13.2.10 Ապահովագրողի պահանջով ներկայացնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու մեջ Ապահովադրի և/կամ Շահառուի և/կամ ՏՄ-ի վարորդի դիտավորությունը բացառող ցանկացած տեղեկատվություն կամ փաստաթղթեր,

13.2.11 գողացված ՏՄ-ի հայտնաբերման վերաբերյալ 24 ժամվա ընթացքում տեղեկացնել Ապահովագրողին,

13.2.12 Ապահովագրական պատահարի հետևանքով վնասված և այնուհետև վերանորոգված և/կամ վերականգնված ՏՄ-ն ներկայացնել Ապահովագրողին զննության: Սույն կետի պահանջները Ապահովադրի կողմից չկատարվելու դեպքում հետագայում ապահովագրական պատահար տեղի ունենալիս Ապահովագրողն իրավունք ունի մերժել ՏՄ-ի այն հատվածների և/կամ մասերի, դետալների վնասները, որոնք նախկինում տեղի ունեցած պատահարների արդյունքում վնասվել են:

13.2.13 Պատշաճ ձևով կատարել Ապահովագրողի կողմից տրված ցուցումները, ինչպես նաև Պայմանագրով և Պայմանների այլ դրույթներով Ապահովադրի համար նախատեսված պարտականությունները:

13.3 Ապահովագրողն իրավունք ունի՝

13.3.1 Պայմանագիրը կնքելուց առաջ պահանջել համապատասխան փաստաթղթերը,

13.3.2 Պայմանագիր կնքելիս զննել, լուսանկարել և գնահատել ՏՄ-ն,

13.3.3 Ապահովագրական ռիսկի փոփոխության մասին տեղեկացվելուց հետո պահանջել փոփոխել Պայմանագրի պայմանները կամ վճարել ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար,

13.3.4 Պայմանագրին կից հավելվածներ և/կամ համաձայնագրեր կնքելիս Ապահովադրից պահանջել լրացուցիչ ապահովագրավճար՝ հավելվածում/համաձայնագրում հաշվարկված գումարի չափով,

13.3.5 Պայմանագիրը միակողմանի դադարեցնել, եթե Պայմանագրի կնքումից հետո պարզվի, որ Ապահովադիրը Պայմանագիրը կնքելիս Ապահովագրողին ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող կամ ապակողմնորոշիչ կամ կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ՝ պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության վերաբերյալ: Այս դեպքում Ապահովագրողը կիրառում է Պայմանների 8.3 կետով նախատեսված հետևանքները:

13.3.6 Ապահովադրի կողմից Պայմանագրի պահանջների խախտման դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին Պայմաններով սահմանված կարգով հայտնելով Ապահովադրին,

13.3.7 Ապահովագրական հատուցման գործընթացի շրջանակներում լուսանկարել ՏՄ-ն և ապահովագրական պատահարին մասնակից այլ ապահովագրական օբյեկտները, իրականացնել ՏՄ-ի զննություն, ինչպես նաև դիմել փորձագետներին (այդ թվում՝ արտասահմանյան)՝ ՏՄ-ի զննում և/կամ հետքաբանական փորձաքննություն անցկացնելու և/կամ ապահովագրական պատահարի պատճառները բացահայտելու և/կամ պատճառված վնասի չափը գնահատելու համար,

13.3.8 անձամբ հետաքննել ապահովագրական պատահարի հանգամանքները կամ ներգրավել այլ անձանց,

13.3.9 իր կողմից իրականացվող հետաքննության շրջանակներում պահանջել Ապահովադրից ներկայացնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու մեջ Ապահովադրի և/կամ Շահառուի և/կամ ՏՄ-ի վարորդի դիտավորությունը բացառող ցանկացած տեղեկատվություն կամ փաստաթուղթ,

13.3.10 կասեցնել ապահովագրական հատուցման գործընթացը Ապահովագրողին անհրաժեշտ հավելյալ տեղեկություններ ստանալու և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործողություններ իրականացնելու համար,

13.3.11 հրաժարվել ապահովագրական հատուցում իրականացնելուց, եթե, անկախ Ապահովադրի կամ Լիազորված վարորդի մեղքի առկայությունից, ապահովագրական հայտի կարգավորման գործընթացում հայտնի չեն դառնում պատահարի հետ կապված իրեն անհրաժեշտ հանգամանքներն ամբողջությամբ, որոնք հնարավորություն կտային համապատասխան որոշում կայացնել ապահովագրական հատուցման իրականացման վերաբերյալ, ներառյալ՝ տվյալ հայտի գծով Ապահովագրողի կողմից նշանակված փորձաքննությունների իրականացման անկատար մնալու կամ անհնարին լինելու դեպքերը,

13.3.12 պահանջել վերադարձնելու արդեն իսկ վճարված ապահովագրական հատուցումը, եթե վճարումից հետո ի հայտ են եկել ապահովագրական հատուցման վճարումը մերժելու՝ Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:

13.3.13 օգտվել Պայմանագրով և Պայմանների այլ դրույթներով նախատեսված իրավունքներից:

13.4 Ապահովագրողը պարտավոր է՝

13.4.1 Նախապես տրամադրել Պայմանները Ապահովադրին՝ ծանոթանալու համար,

13.4.2 Պայմանագրի կնքման ժամանակ Պայմանագրի և Պայմանների մեկական օրինակ տրամադրել Ապահովադրին,

13.4.3 Ապահովագրական հատուցման մերժման դեպքում կայացնել պատճառաբանված որոշում և հնգօրյա ժամկետում ուղարկել Ապահովադրին (Շահառուին)՝ Պայմանագրում կամ հայցային դիմումում նշված հասցեով:

13.5 Կողմերը պարտավոր են չհրապարակել և/կամ երրորդ անձանց չտրամադրել իրենց հայտնի դարձած առևտրային, բժշկական, ֆինանսական, ապահովագրական և ՀՀ օրենսդրությամբ գաղտնի համարվող այլ տեղեկություններ, որոնք հայտնի են դարձել իրենց հարաբերությունների արդյունքում, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

14 ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

14.1 Ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին (Շահառուին, Լիազորված վարորդին) պատճառված վնասից բխող նրա (կամ Շահառուի, Լիազորված վարորդի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի (անձանց), իսկ ՃՏՊ-ի դեպքում նաև վերջինիս (վերջիններիս) կողմից վարած տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:

14.2 Ապահովադիրը (Շահառուն, Լիազորված վարորդը) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով իր պահանջի իրավունքն Ապահովագրողի կողմից իրականացվելու համար անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը: Եթե Ապահովադիրը (Շահառուն, Լիազորված վարորդը) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի, Լիազորված վարորդի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավել վճարված հատուցման գումարը:

14.3 Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի (Շահառուի, Լիազորված վարորդի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

15 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

15.1 Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, Պայմանների համաձայն ապահովագրական պատահար չեն համարվում և ըստ այդմ չեն հատուցվում այն դեպքերն ու վնասները, որոնք.

15.1.1 Պայմանագրում նշված Ապահովագրության տարածքից դուրս տեղի ունեցած պատահարի հետևանք են,

15.1.2 Ապահովադրի և նրա ընտանիքի անդամների (ծնող, զավակ, ամուսին, որդեգրող, որդեգրված, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայր կամ քույր կամ նրանց ամուսին և զավակներ, պապ, տատ, թոռ), Շահառուի, Ապահովագրված անձի, Լիազորված վարորդի, Ապահովադիրների աշխատողների կամ ապահովագրական պատահարի առաջացման համար շահ ունեցող ցանկացած անձի դիտավորությամբ կատարված գործողությունների կամ անգործության հետևանք են,

15.1.3 Լիազորված վարորդի կողմից հակաօրինական գործողություններ կատարելու նպատակով ՏՄ-ն շահագործելու կամ օգտագործելու հետևանք են,

15.1.4 զանգվածային անկարգությունների կամ ժողովրդական հուզումների հետևանք են,

15.1.5 օտարերկրյա թշնամական ուժերի կողմից սկսված պատերազմի (անկախ նրանից, թե պատերազմ հայտարարվել է, թե ոչ), ներխուժման, քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության, խռովության, զինվորական հեղաշրջման, զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների, իշխանության ապօրինի զավթման կամ ահաբեկչական ակտի հետևանք են,

15.1.6 ձայնային կամ գերձայնային արագությամբ ընթացող ինքնաթիռի կամ այլ թռչող ապարատի առաջացրած ճնշման ալիքների հետևանք են,

15.1.7 ռադիոակտիվ աղտոտման կամ ցանկացած պայթուցիկ միջուկային ագրեգատի կամ դրա բաղկացուցիչ մասի ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ այլ վտանգավոր նյութերի արտազատման հետևանք են,

15.1.8 երկրաշարժի հետևանք են, եթե Պայմանագրով նախատեսված չէ նշված ռիսկը,

15.1.9 ՏՄ-ում հրավտանգ, դյուրավառ, թունավոր և պայթուցիկ նյութերի առկայության կամ տեղափոխման հետևանք են՝ բացառությամբ ՏՄ-ի բնականոն աշխատանքը ապահովող նյութերի, որոնք լցված են ՏՄ-ի մաս կազմող և տվյալ նյութի համար նախատեսված բաքում և/կամ տարայում,

15.1.10 Ապահովադրի, Լիազորված վարորդի և/կամ ուղևորների կողմից ՏՄ-ի սրահում ծխելու, կրակի և դյուրավառ առարկաների հետ սրահում անզգույշ վարվելու հետևանք են,

15.1.11 պետական մարմինների կարգադրությամբ ՏՄ-ն առգրավելու, բռնագրավելու, ռեկվիզիցիայի, դրա վրա արգելանք դնելու կամ այն ոչնչացնելու հետևանք են (հատուցման ենթակա չեն նաև այդ գործողությունների ընթացքում և հետևանքով առաջացած վնասները կամ կորուստը),

15.1.12 ՏՄ-ի մարտկոցի կամ այլ էլեկտրասարքավորումների թույլ կամ կարճ միացման և/կամ ներքին խզման (հոսանքի տատանման) հետևանք են,

15.1.13 ՏՄ–ի և/կամ նրա մասերի, դետալների, ագրեգատների անսարքության, այդ թվում՝ ՏՄ-ի մեխանիկական և/կամ էլեկտրական խզումների կամ ագրեգատների մեջ այլ առարկաներ կամ նյութեր ընկնելու/ներթափանցելու հետևանք են, եթե սույն ենթակետում նկարագրված իրավիճակները ապահովագրական պատահարի հետևանք չեն,

15.1.14 ՏՄ-ի վրա կամ դրա մեջ գտնվող բեռի (գույքի) ոչ պատշաճ կերպով ամրացված լինելու հետևանք են,

15.1.15 ՏՄ-ի տեխնիկական բնութագրով սահմանված թույլատրելի քանակից և/կամ քաշից ավել բեռի (գույքի) և/կամ ավելի շատ թվով ուղևորի տեղափոխման հետևանք են,

15.1.16 ՏՄ–ի տեղափոխման, փոխադրման, քարշակման (առանց ՏՄ-ն վարելու) հետևանք են,

15.1.17 ՏՄ-ով այլ տրանսպորտային միջոց քարշակելու հետևանք են: Սույն դրույթը կիրառելի է, եթե ՏՄ-ն տեխնիկական բնութագրով քարշակման համար նախատեսված չէ:

15.1.18 Միջատների, կրծողների և սողունների գործողության հետևանք են,

15.1.19 ՃՏՊ-ի ժամանակ ՏՄ-ն առանց համապատասխան կառավարման թողնելու կամ պատշաճ չկառավարելու հետևանք են, ինչի պատճառը վարորդի ուշադրությունը բջջային հեռախոսով, ռադիոկապով կամ այլ սարքավորումներով (պլանշետ, նոութբուք, ականջակալներ, և նմանատիպ սարքավորումներ) զբաղված լինելն է,

15.1.20 ՏՄ-ի երթևեկության ընթացքում ճանապարհի երթևեկելի մասից դուրս գալու և վթարվելու հետևանք են՝ անկախ երթևեկելի մասից դուրս գալու պատճառներից, այդ թվում՝ կառավարումը կորցնելու, սահելու, անսարքության, այլ տրանսպորտային միջոցի, առարկայի կամ կենդանու հետ բախումից խուսափելու կամ ցանկացած այլ պատճառով, բացառությամբ վարորդի մահվան, ճանապարհի երթևեկելի մասում մեկ այլ տրանսպորտային միջոցի, առարկայի կամ կենդանու հետ բախման պատճառով ՏՄ-ի երթևեկելի մասից դուրս գալու դեպքերի, որոնց հետևանքով պատճառված վնասը հատուցման ենթակա է: Սույն ենթակետում նշված

բացառությունը չի տարածվում այն դեպքերի/իրադարձությունների վրա, որոնք տեղի են ունեցել բակային կամ ճանապարհից դուրս այլ տարածքներում երթևեկության ընթացքում:

Սույն պայմանների իմաստով ճանապարհի երթևեկելի մաս է համարվում ճանապարհի տարրը՝ նախատեսված ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթևեկության համար: Ճանապարհի երթևեկելի մաս չեն համարվում ճանապարհի մյուս տարրերը, այդ թվում՝ մայթերը, ճանապարհի եզրաքարերը և բարձրացված անվտանգության կղզյակները /ՀՀ Կառավարության 28.06.2007 թ. թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ՃԵԿ ձև 2, 2.7 կետ/, կողնակը, այն է՝ երթևեկելի մասին հարող, դրանից ծածկույթի տեսակով տարբերվող կամ համապատասխան գծանշումով առանձնացված ճանապարհի տարրը, ինչպես նաև դաշտամիջյան՝ հողածածկ ճանապարհի բանուկ մասին հարող տարածքը:

15.1.21 ՏՄ-ն առանց հսկողության և/կամ բնակավայրերից դուրս թողնելու հետևանք են,

15.1.22 ՏՄ-ն միացված շարժիչով առանց հսկողության թողնելու հետևանք են,

15.1.23 խարդախության միջոցով իրականացված ՏՄ-ի հափշտակության հետևանք են, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

15.1.24 ՏՄ-ի յուրացման կամ շորթման հետևանք են:

15.2 Ապահովագրական հատուցման ենթակա չեն նաև հետևյալ վնասները.

15.2.1 ՏՄ հայելիների, անվադողերի, անվահեցերի, անիվների դեկորատիվ ծածկերի, հաշվառման համարանիշների, չեզոքացուցիչների (կատալիզատորների), լապտերների, ֆիրմային ցուցանշանների, արտաքին այլ տեղադրված մասերի և սարքավորումների, այդ թվում՝ սպոյլերների, մոլդինգների հափշտակությունը,

15.2.2 ՏՄ ընթացային մասերի վնասը կամ կորուստը, որի առաջացումը պայմանավորված չէ մեկ մետրից ավել բարձրություն ունեցող կառույցների, ծառի կամ ՏՄ-ի հետ բախմամբ: Սույն ենթակետի իմաստով ընթացային մաս է համարվում ՏՄ-ի ընթացքն ապահովող համակարգերի, ագրեգատների և սարքավորումների (ներառյալ՝ կախոցներն ու անիվները, ղեկային կառավարման ու արգելակային համակարգերը, տրանսմիսիան և էլեկտրասնուցումը, այդ թվում շարժիչն իր օժանդակ համակարգերով) ամբողջությունը,

15.2.3 թափքի կամ նրա առանձին մասերի երկրաչափական ձևախախտման կամ փոփոխությունների չհանգեցնող ՏՄ-ի ներկածածկի և/կամ ապակիների վնասումը, այդ թվում նաև փոքր չափի քարերի, ավազի, փոքր առարկաների, ավտոմեքենայի մաքրման/լվացման, ծառերի և/կամ թփուտների ճյուղերի ներգործության հետևանքով առաջացած վնասները,

15.2.4 լրացուցիչ սարքավորումների կորուստը, վնասը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,

15.2.5 ՏՄ-ի վերանորոգման, դրա վրա կամ դրա մեջ ավտոպահեստամասերի, բաղադրամասերի, սարքավորումների, լրացուցիչ սարքավորումների տեղադրման ժամանակ և/կամ տեղադրման հետևանքով պատճառված վնասը,
15.2.6 ՏՄ-ի բանալիների, ձայնաազդանշանային համակարգի և/կամ կենտրոնական փականի վահանակների հափշտակումը կամ կորուստը,
15.2.7 ՏՄ-ի ցանկացած անսարքության հետևանքով առաջացած վնասը և/կամ կորուստը,
15.2.8 ՏՄ-ի վրա կամ ՏՄ-ի մեջ բեռի (իրերի, առարկաների, նյութերի և այլն) տեղադրման կամ ՏՄ-ից բեռի հանման (բեռնաթափման) ընթացքում ՏՄ-ին, երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ այլ գույքին հասցված վնասը կամ կորուստը,
15.2.9 ճանապարհային ծածկույթի անհարթությունների, այդ թվում արագությունը նվազեցնող արգելանքների, բաց դիտահորերի կամ փոսերի պատճառով ՏՄ-ին, ներառյալ՝ անվադողերին, անվահեցերին հասցված վնասը,
15.2.10 արգելակման հետևանքով ՏՄ-ի անվադողերին և անվահեցերին, և անհիմն արգելակման հետևանքով ՏՄ-ին պատճառված վնասը,
15.2.11 ՏՄ-ի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը, այդ թվում՝ ՏՄ-ի վերանորոգումից հետո դրա շուկայական (իրական) արժեքի նվազումը և/կամ ապրանքային տեսքի կորուստը,
15.2.12 Ապահովադրի, Շահառուի, Լիազորված վարորդի և/կամ ուղևորի ածանցյալ (կապակցված) ծախսերը և կորուստները (այդ թվում՝ ոչ նյութական վնաս, կորցրած և/կամ չստացված եկամուտ (բաց թողնված օգուտ), տուժանք՝ տույժեր և տուգանքներ, պարտադիր վճարումներ, ցանկացած պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման, չկատարման և/կամ թերի կատարման հետևանքով առաջացած ծախսեր, վնասներ),
15.2.13 ապահովագրական պատահարի արդյունքում այլ տրանսպորտային միջոց (որպես ժամանակավոր փոխարինման միջոց) օգտագործելու հետ կապված ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով,
15.2.14 Բաժին Ա-ով Ապահովադրի, Շահառուի կամ Լիազորված վարորդի տիրապետման տակ գտնվող կամ սեփականության իրավունքով պատկանող ՏՄ-ով տեղափոխվող բեռի (գույքի) և/կամ ունեցվածքի կորուստը կամ վնասը, անկախ նրանից, թե տեղափոխվող բեռը (գույքը) կամ ունեցվածքը ում է պատկանում,
15.2.15 ՏՄ-ի շարժիչի ծածկոցը, բեռնախցիկի կափարիչը, դռները կամ լիցքավորման տեղի կափարիչը ընթացքի ժամանակ կամ բնական աղետների ազդեցության հետևանքով բացվելու դեպքում ՏՄ-ին պատճառված վնասները,
15.2.16 ՏՄ-ի գործարանային խոտանի կամ տեխնոլոգիական արատի կամ նորոգման ժամանակ թույլ տրված թերացումների պատճառով առաջացած վնասները,

15.2.17 ՏՄ-ի գազաբալոնային համակարգի պայթյունի պատճառով առաջացած ցանկացած տեսակի վնասը, բացառությամբ եթե պայթյունը տեղի է ունեցել ապահովագրական պատահարի արդյունքում,

15.2.18 մինչև Պայմանագրի կնքումը ՏՄ-ի առկա վնասները, որոնք առաջացել են մինչ այդ տեղի ունեցած պատահարների հետևանքով,

15.2.19 ՏՄ-ի վերանորոգման, մաքրման, լվացման, պահպանման, կանգառման և այլ ծառայություններ մատուցելիս ծառայություն մատուցողի կողմից ՏՄ-ի պահպանության կամ պաշտպանության պարտականությունների անփույթ կամ անբարեխիղճ կատարման արդյունքում առաջացած վնասը:

16 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ

16.1 Ապահովագրողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե.

16.1.1. ՏՄ-ն օգտագործվել/շահագործվել է ոչ սթափ վիճակում՝ ալկոհոլային, թմրանյութերի և/կամ տոքսիկ և/կամ հոգեմետ նյութերի ազդեցության տակ, և/կամ ՏՄ-ն շահագործող վարորդը հրաժարվել է համապատասխան բժշկական փորձաքննությունից (զննում անցնելուց): Սույն ենթակետի իմաստով վարորդը համարվում է ոչ սթափ վիճակում գտնվող, եթե ստուգմամբ պարզվում է, որ նրա մեկ լիտր արտաշնչած օդի մեջ ալկոհոլի պարունակությունը 0.1 միլիգրամից ավելի է կամ նրա մեկ լիտր արյան մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը ավելի է 0.2 գրամից կամ նրա արյան կամ մեզի մեջ թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և/կամ տոքսիկ նյութերի պարունակությունը մեծ է զրոյից:

16.1.1 Դեպքի պահին ՏՄ-ն ունեցել է դրա շահագործումն արգելող անսարքություններ և պայմաններ՝ համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 995-Ն որոշման հավելված 2-ի,

16.1.2 ՏՄ-ն մասնակցել է փորձարկումների, մրցավազքի և այլ մրցությունների կամ վարորդական դասընթացների կամ օգտագործվել է ուսուցման նպատակով,

16.1.3 ՏՄ-ն օգտագործվել/շահագործվել է Պայմանագրով չնախատեսված Լիազորված վարորդի կողմից:

16.1.4 Իրավասու պետական մարմնի կողմից չի արձանագրվել պատահարի ի հայտ գալու փաստը կամ ՏՄ վարորդը/Ապահովադիրը հրաժարվել է պատահարի փաստով իրավասու պետական մարմնի միջամտությունից (հրաժարվել է զանգահարել իրավասու պետական մարմին կամ սպասել մինչև վերջինիս ներկայացուցչի՝ պատահարի վայր ժամանելը), բացառությամբ եթե Ապահովագրողը

գրավոր ձևով թույլատրել է Ապահովադրին հրաժարվել այդ միջամտությունից՝ համաձայն Պայմանների 9.2 կետի:

16.1.5 ՏՄ-ն օգտագործվել է տվյալ եղանակային պայմաններին ոչ համապատասխան անվադողերով, սակայն, անկախ եղանակային պայմաններից, ձմեռային անվադողերի օգտագործումը պարտադիր է համարվում նոյեմբերի 15-ից ապրիլի 1-ը ընկած ժամանակահատվածում, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ: Ընդ որում, այս պահանջը պարտադիր է միաժամանակ ՏՄ-ի բոլոր անվադողերի համար: Սույն կետի իմաստով ձմեռային անվադողը պետք է մակնշված լինի «Ձյան փաթիլ» նշանի տեսքով:

16.1.6 ՏՄ-ն օգտագործվել/շահագործվել է ՏՄ վարելու իրավունք չունեցող կամ ՏՄ վարելու իրավունքից զրկված անձի կողմից կամ այն վարորդի կողմից, ով պատահարի պահին չի ունեցել գործող վարորդական իրավունքի վկայական կամ ում ՏՄ վարելու իրավունքը կասեցվել է:

16.1.7 ՏՄ-ն ենթարկվել է վերասարքավորման, և Ապահովադիրը դրա մասին գրավոր ձևով չի տեղեկացրել Ապահովագրողին,

16.1.8 ՏՄ-ն օգտագործվել/շահագործվել է վարորդի աչքի, ֆունկցիաների խիստ խանգարման հանգեցնող վերին կամ ստորին վերջույթի (ներառյալ դրա անատոմիական հատվածների) բացակայության կամ դրանց ձևախախտումների առկայության պայմաններում: Սույն կետը կիրառելի է, եթե այն պատճառ է հանդիսացել ապահովագրական պատահարի առաջացման: Սույն կետից բացառություն են այն դեպքերը, երբ վարորդը վարել է իր հնարավորություններին հարմարեցված ՏՄ:

16.1.9 Վթարը տեղի է ունեցել ՏՄ-ի հանդիպակաց ուղեմաս մուտք գործելու կամ ճանապարհի երթևեկելի մասի ձախ կողմից դուրս գալու արդյունքում կամ ընթացքում (այդ թվում՝ ՏՄ-ի ընթացքի կայունությունն ու կառավարելիությունը կորցնելու կամ վարորդի կողմից երթևեկելի մասում առկա խոչընդոտը կամ վտանգի աղբյուրը շրջանցելու հետևանքով),

16.1.10 Խախտվել են ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 995-Ն որոշման հավելված 1-ով սահմանված հետևյալ ճանապարհային երթևեկության կանոնները՝ ՏՄ-ի վարում լուսացույցի արգելող ազդանշանի տակ, արգելված վայրում ՏՄ-ի հետադարձ, շրջադարձ կամ հետընթաց կատարում, ՏՄ-ով հոծ գծանշման հատում, ՏՄ-ի շահագործում տվյալ ճանապարհահատվածի համար սահմանված (թույլատրված) արագությունից 30 (երեսուն) կմ/ժ-ով ավելի արագությամբ,

16.1.11 ՏՄ-ի օգտագործման/շահագործման ժամանակ խախտվել են հրդեհային անվտանգության կանոնները,

16.1.12 Ապահովադիրը խոչընդոտում է Ապահովագրողի կողմից պատահարի պատճառների բացահայտման և վնասի չափի ճշտման, ներառյալ՝ փորձաքննությունների և հարցումների իրականացման գործընթացին,
16.1.13 Ապահովագրողի կողմից պատահարի հանգամանքները հետաքննելու շրջանակներում և ընթացքում Ապահովադիրը հրաժարվել է Ապահովագրողին ներկայացնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու մեջ Ապահովադրի և/կամ Շահառուի և/կամ ՏՄ-ի Լիազորված վարորդի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն կամ փաստաթուղթ (այդ թվում՝ Ապահովագրողի կողմից նշված ժամանակահատվածի համար և նշված հեռախոսահամարի մասով բջջային օպերատորի կողմից տրամադրվող մուտքային և ելքային զանգերի ու կարճ հաղորդագրությունների վերաբերյալ մանրամասն տեղեկություն),
16.1.14 Ապահովադիրը/Շահառուն մեղավոր կողմից կամ երրորդ անձանցից ստացել է վնասի հատուցում,
16.1.15 Ապահովադիրը, Շահառուն կամ Լիազորված վարորդը չի կատարել և/կամ թերի է կատարել ապահովագրական պատահարի հետևանքները նվազեցնելու և/կամ դրա մեծացումը կանխելու իր պարտականությունը, այդ թվում՝ վթարային լուսարձակների միացում, զգուշացնող վահանակի տեղադրում և այլն,
16.1.16 չի կողպել ՏՄ-ի դռները, բեռնախցիկը, պատուհանները, ՏՄ հաշվառման վկայագիրը թողել է ՏՄ-ի մեջ, և/կամ նրա բանալիները թողել է ՏՄ-ի հետ կապված ցանկացած ծառայություն և/կամ սպասարկում իրականացնող իրավաբանական և/կամ ֆիզիկական անձի և/կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ, այդ թվում՝ ՏՄ ավտոլվացում, ավտոկայանատեղի, ժամանակավոր պահեստավորում, վերանորոգում, տեխսպասարկում, տեխզննություն իրականացնող անձանց մոտ, որոնք գրավոր և/կամ բանավոր պայմանավորվածության համաձայն տիրապետում և/կամ հսկում են ՏՄ-ն, և այդ ընթացքում տեղի է ունեցել հափշտակություն,
16.1.17 վարորդը ՏՄ-ն թողնելուց առաջ չի ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք բացառում են ՏՄ-ի ինքնաբերաբար շարժումը կամ երրորդ անձանց կողմից ՏՄ-ի օգտագործումը,
16.1.18 Ապահովադիրը, Շահառուն կամ Լիազորված վարորդը ՏՄ-ի, ապահովագրական պատահարի առաջացման հետ առնչություն ունեցող անձանց և/կամ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների և հանգամանքների վերաբերյալ դիտավորյալ ներկայացրել են ոչ հավաստի, ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք էական նշանակություն չեն ունեցել ապահովագրական պատահարի առաջացման պատճառների և/կամ ապահովագրական ռիսկի գնահատման համար,

16.1.19 Պատահարից հետո Ապահովադիրը վնասված ավտոմեքենան կամ դրա վնասված մասերը կամ մնացորդները մինչ վերանորոգումը չի ներկայացրել Ապահովագրողին զննության,

16.1.20 Ապահովագրական պատահարից հետո ՏՄ-ի զննում կամ հետքաբանական փորձաքննություն անցկացնելու համար համապատասխան գրավոր կամ բանավոր պահանջը ստանալուց հետո Ապահովագրողի ներկայացուցչին և/կամ փորձագետին 3 օրվա ընթացքում չի տրամադրվել ՏՄ-ն հետվթարային վիճակում և/կամ տրամադրվել է այնպիսի պայմաններում և/կամ տարածքում, որն անհնար է դարձնում դրա զննումը և/կամ հետքաբանական փորձաքննության անցկացումը: Պայմանների իմաստով Ապահովագրողի ներկայացուցիչ է համարվում նրա աշխատողը կամ լիազորագրով հանդես եկող անձը:

16.1.21 մինչև Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը վճարելու կամ հատուցման վճարումը մերժելու վերաբերյալ որոշում կայացնելը իրականացվել են ՏՄ-ի և/կամ մասնակից տրանսպորտային միջոցների և/կամ Երրորդ անձի Գույքի վերանորոգման կամ ապամոնտաժման աշխատանքներ:

16.1.22 Ապահովագրական պատահարի արդյունքում կնքվել է ԱՊՊԱ պայմաններով հաստատված համաձայնեցված հայտարարագիր, որում Ապահովադիրը ընդունել է անմեղությունը:

16.1.23 Ապահովագրական պատահարի արդյունքում կնքվել է ԱՊՊԱ պայմաններով հաստատված համաձայնեցված հայտարարագիր, որում Ապահովադիրը ընդունել է իր մեղավորությունը, սակայն պատահարը միաժամանակ արձանագրվել է նաև իրավասու պետական մարմնի կողմից համաձայնեցված հայտարարագրից տարբերվող մեղավորության նշումներով,

16.1.24 Ապահովադիրը կամ Լիազորված վարորդը կամ Շահառուն չի կատարել Պայմանագրով և Պայմաններով սահմանված իր պարտականությունները:

16.2 Ապահովագրողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժել ապահովագրական հատուցման վճարումը Բաժին Գ-ով նաև հետևյալ դեպքերում.

16.2.1 Ապահովադրին, Լիազորված վարորդին, ՏՄ-ի սեփականատիրոջը պատճառված գույքային և անձնական վնասները, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի անդամներին, ՏՄ-ի ուղևորներին, Ապահովադրի մոտ աշխատող յուրաքանչյուր անձի գույքին պատճառված վնասները: Սույն կետի իմաստով ընտանիքի անդամներ են անձի ծնողները, ամուսինը, երեխաները, քույրը և եղբայրը,

16.2.2 Տուժած երրորդ անձանց կողմից հատուկ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու, կողմնակի խնամքի միջոցներ և այլ մասնագիտություն ձեռք բերելու համար կատարված ծախսերը,

16.2.3 Տուժած երրորդ անձանց առողջարանա-կուրորտային բուժման հետ կապված ծախսերը,

16.2.4 բոլոր տեսակի դեղորայքի և բժշկական պարագաների, բժշկական ծառայությունների, այդ թվում՝ հետազոտման, բուժման, համար կատարված ծախսերը, որոնք տուժած երրորդ անձն անվճար ստանալու իրավունք ունի,

16.2.5 Վնասը, որը պատճառվել է երրորդ անձանց պատկանող.

16.2.5.1 ձեռագրերին, պլաններին/քարտեզներին, գծագրերին և ցանկացած այլ տեսակի փաստաթղթերին, հաշվապահական և գործառնական գրքերին,

16.2.5.2 կանխիկ դրամին և կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերին (արժեթղթեր, բանկային ստացագրեր, պարտքային ստացագրեր, վաուչերներ, կտրոններ, ապրանքագրեր, վարկային քարտեր, դրամական վստահագրեր և այլ փաստաթղթեր, որոնք արժեթղթերի մասին օրենքով դասվում են արժեթղթերի թվին), զեղչային քարտերին, մեդալներին,

16.2.5.3 թանկարժեք և կիսաթանկարժեք քարերին ու ազնիվ մետաղներին և դրանցից պատրաստված զարդերին, ոսկերչական իրերին և առարկաներին,

16.2.5.4 ցուցահանդեսային նմուշներին, նկարներին, քանդակներին և այլ հավաքածուներին կամ առարկաներին, ցանկացած արվեստի ստեղծագործություններին և/կամ գործերին, մշակութային կամ կրոնական արժեք ներկայացնող իրերին/պարագաներին, թանկարժեք, հնաոճ և յուրօրինակ իրերին/պարագաներին,

16.2.5.5 մոդելներին, մակետներին, նմուշներին և այլ նմանատիպ իրերին,

16.2.5.6 հեռախոսներին, համակարգիչներին և համակարգերում տեղեկություններ կրող և պահպանող սարքերին/սարքավորումներին, մասնավորապես՝ տեսա և ձայնաժապավեններին, սկավառակներին, հիշողության բլոկերին և այլ էլեկտրոնային ու էլեկտրատեխնիկական սարքավորումներին,

16.2.5.7 թղթային, էլեկտրոնային կամ այլ տեխնիկական կրիչների վրա գտնվող տեղեկատվությանը և/կամ տվյալների բազային, էլեկտրոնային համակարգերին և/կամ համակարգչային ծրագրերին, ձեռագրերին, նախագծերին և այլ փաստաթղթերին (փաստաթղթայնացված ինֆորմացիա),

16.2.5.8 կինո-ֆոտո-աուդիո նյութերին, այդ թվում՝ արխիվային նյութերին,

16.2.5.9 գիտության, գրականության և արվեստի ստեղծագործություններին,

16.2.5.10 պատմամշակութային նշանակության շենքերին և կառույցներին,

16.2.5.11 ինտելեկտուալ սեփականության օբյեկտներին:

16.2.6 Շրջակա միջավայրին պատճառված վնասը, ներառյալ ՏՄ-ից թափված կամ արտահոսած հեղուկի պատճառով առաջացած վնասները:

17 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

17.1 Պայմանագրում փոփոխությունները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ գրավոր համաձայնագիր կազմելու միջոցով:

17.2 Պայմանների իմաստով Ապահովագրողի կողմից Ապահովադրին (Շահառուին) ուղարկված բոլոր ծանուցումները, որոշումները և գրությունները (այսուհետ միասին՝ Ծանուցում) համարվում են պատշաճ ծանուցված (առաքված), եթե կատարվել են հետևյալ եղանակներից որևէ մեկով.

17.2.1 Ծանուցումը ուղարկվել է փոստային առաքմամբ՝ Պայմանագրում կամ հայցային դիմումում նշված հասցեով,

17.2.2 Ծանուցումը ուղարկվել է բջջային հաղորդագրությամբ՝ Պայմանագրում կամ Ապահովադրի (Շահառուի) և/կամ նրա լիազորված անձի կողմից տրամադրված այլ փաստաթղթի մեջ (հայցային դիմում, հայտարարություն, և այլն) նշված հեռախոսահամարին,

17.2.3 Ծանուցումը ուղարկվել է էլեկտրոնային նամակի տեսքով՝ Պայմանագրում կամ հայցային դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեով:

17.3 Վերոնշյալ հասցեների և/կամ Պայմանագրում նշված կողմերի տվյալների (հասցե, հեռախոսահամար, բանկային տվյալներ և այլն) փոփոխության դեպքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է այդ մասին տեղեկացնել Ապահովագրողին: Եթե Ապահովագրողը չի տեղեկացվել հիշյալ փոփոխությունների մասին, ապա Ապահովադրին (Շահառուին) բոլոր Ծանուցումները ուղարկվում են նրա վերջին հայտնի հասցեով և համարվում են պատշաճ առաքված (հանձնված), իսկ Ապահովադիրը (Շահառուն)՝ պատշաճ ծանուցված, անկախ փաստացի ծանուցված լինելու հանգամանքից: Նման դեպքում Ծանուցման սկիզբ է համարվում դրա ելքի ամսաթիվը:

17.4 Սույն Պայմանները կցվում են Պայմանագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը և պարտադիր են Կողմերի համար:

17.5 Պայմանագրի և Պայմանների դրույթների միջև անհամապատասխանություն լինելու դեպքում գերակայությունը տրվում է Պայմանագրին:

17.6 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն երկկողմանի կնքելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

18 ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

18.1 Կողմերն ազատվում են Պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել, որն անմիջականորեն հանգեցրել է պայմանագրային պարտավորությունների

ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարման անհնարինությանը: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

18.2 Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին մյուս Կողմին առնվազն 15 օր առաջ տեղյակ պահելով:

18.3 Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա անհաղթահարելի ուժի ազդեցությունը պարտավոր է ապացուցել այն Կողմը, որի պարտականությունների իրականացմանն է խոչնդոտում նման ազդեցությունը:

19 ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

19.1 Պայմանագրերի շրջանակներում կամ դրանց կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունները սկսվելու օրվանից մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: